ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Ուսումնական և գրականական ժողովածու:

Օրագրիս № 12 փոխարէն 1865:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

Գերապատիւ Ս. Գալֆայեանի ‘‘Բառգրքի և Տելեմաքի Արկածների,, հրատարակման պատճառով գրել է հետևեալ յօդուածը պ. Ֆրանսիսկ Դիւկրօն (Francisque Ducros) և հրատարակել է Փարիզում Ազգային Լուսաւորութեան Ընդհանուր օրագրի մէջ*:

‘‘Շատ ժամանակ չէ, որ լոյս ընծայվեցան երկու գրքեր, որոնք իւրեանց զանազան յատկութիւններով դարձնում են իւրեանց վերա մեր ուշադրութիւնը: Այդ գրքերն են ‘‘Բառգիրք Հայերէնից—Ֆրանսիերէն,, և Ֆէնէլօնի ‘‘Տելեմաքի Արկածները,, հայկական լեզուով թարգմանված: Այս երկու տպագրութիւնները վկայում են այն մտաւոր շարժումն, որ կատարվում է մեր ժամանակներն հին Հայաստանի մէջ, և որին պատկանում է այդ գրքերի հեղինակը թէ ազգով և թէ իւր բոլոր համակրութեամբ: Այդ շարժումն կատարելապէս գին գնելու համար, որ այժմեան Ֆրանսիաի արևելքի վերա ունեցած ներգործութեան և լուսաւորութեան համար բարեյաջող գործ է, հարկաւոր է անպատճառ մեր ուշադրութիւնը դարձնել XVII դարի սկզբին, որը հայկական ժողովուրդի համար կազմում է վերածնութեան մինոր շրջան: Բայց այդ ժամանակ միևնոյն կերպով մեր ուշադրութիւնը պէտք է դարձնել առաջվան դարերի և առհասարակ Հայաստանի ստրկութենից և զանազան արշաւանքներից յետոյ նորա անկման վերա և մանաւանդ Հայաստանի և բոլոր Լևանտի համար կորստական հետևանքների վերա, որոնք ծագեցան երբ Եւրոպայի ծովային ճանապարհները և ընդհանուր վաճառականութիւնը դէպի արևելքի միւս ծայրը դարձան:

* Journal général de l' Instruction Publique, 1862, № 18:

Ինչպէս յայտնի է, Հայաստանը տարածվում է Ասիաի բոլոր արևմտեան մասում, և շրջապատվում է Կովկասեան սարերով, Կասպիական ծովով, Միջագետքով և Սև ծովով: Նորա կենտրոնը Արարատ սարն է: Այս երկիրը, որ հին ժամանակներում ամենալուսաւոր աշխարհներից մին էր, իւր անունը Հայկի վեցերորդ յաջորդ Արամից է առացել:

Հայկը Հայերի նախնի և առաջին Թագաւոր էր, հայկական պատմագրողների վկայութիւններին նայելով, նա Նոյեան որդու Յաբեթի Թոռի որդին էր: Հայաստանը փոփոխակի ընկաւ Ասորիների, Մեդացիների, Պարսիկների, Մակեդոնացիների, Հռովմացիների, Յոյների, արևելեան Հռովմական կայսրութեան, Թուրքերի, Քուրդերի և Արաբների իշխանութեան ներքոյ; իսկ վերջին ժամանակներում նա բոլորովին բաժանվեցաւ երեք տէրութիւնների մէջ, որոնք նորան շրջապատում են. Ռուսների, Պարսիկների և Թուրքերի մէջ:

Հայերը, . . . նման, օտար իշխանութեան տակ հաստատ պահեցին իւրեանց կրօնը և ազգային սովորութիւնները; և բոլորովին չեն սպառվել այն հեղինակները, որոնք արևելքի ազգերի մէջ Հայերին ամենախելօք, խաղաղ, ամենաշխատաւ և ամենագործունեայ ազգ են ընդունել: Իններորդ դարում Հայաստանը մինչև 30 միլիօն բնակիչ ունէր; այժմեան ժամանակ Հայերը հազիւ 8(?) միլիօնի չափ կլինին, այն էլ ցրված են փոքր խմբերով ամեն տեղ. Կոստանդնուպոլսում, Սմիւռնայում, Մոսկվայում, Վեննայում, Վենետիկում, մինչև անգամ Հնդկաստանում և Չինաստանում: Պատմագրական զանազան էպօքներում, երբ Հայաստանը անկախ Թագաւորութիւն էր կազմում, նորա պատմութիւնը էլ զուրկ չէր վսեմութենից և օգտաւէտութենից: Դուրս չդալով Քրիստոնէութեանից, կարելի է տեսնել թէ չորրորդ դարից սկսած, Հայերը ինչպէս բոլոր իւրեանց գործունէութիւնը նվիրել էին մտացական և վաճառականական պարապմունքին: Այդ էպօքից սկսած մինչև Կիպրոսի Լուսինեան տան վերջին Թագաւորի Լևոն VI-ի անկումն, 1374 Թւին, մի կողմից հայկական եկեղեցին, ինչպէս հռովմական եկեղեցին արևմտքում, բոլոր միջնադարեան լուսաւորութեան և ուսումնականութեան ներկայացնող էր այդ երկրի համար, և արևելքի բոլոր եկեղեցիներից շատ հռչակվեցաւ իւր ուսումնականներով; միւս կողմից Հայերի ծաղկած վաճառականութիւնը բոլոր Լևանտի մէջ աւելացրեց սորա վաճառականական կենտրոնները: Հայաստանի

լինելութեան այս երկար ընթացքում (մինչև 1000 տարի) ծաղկումէր և հայկական գրականութիւնը, որի սկիզբը V դարում մեզ ցոյց են տալիս Մովսէս Խորենացու հին երգերը, նորա Հայկական Պատմութիւնը, որ պ. Լըվայեան դը Ֆլորիվալը թարգմանեց ֆրանսիերէն, —Եղիշէի Վարդանանների պատերազմի նըկարագրութիւնը, որ պ. Կապպալչին ֆրանսիերէն թարգմանեց; և բազմաթիւ տոմսաւորներ, որոնք աւելի միջնադարեան պատմութիւնը ուսումնելու ժամանակ շատ օգտաւէտ են։ 319 թւին Հայերը ընդունելով քրիստոնէութիւնը, առանձին կերպով սիրեցին Յոյների գրականութիւնը և լեզուն; և 5-երորդ դարում երևեցան շատ թարգմանութիւններ յունական և ասորական լեզուներից, որոնց մէջ նշանաւորն է Եվսեբիոսի Քրոնիկոնը։

Նշանաւոր են նոյնպէս և բազմաթիւ փիլիսոփայական և աստուածաբանական գրվածներ, որոնցից մի քանիներ մեր ուշադրութիւն են դարձնում իւրեանց վերա, ինչպէս Ներսէս Լամբրոնացու Ատենախօսութիւնը, հայկական օրացոյցին համեմատ Սուրբերի կեանքը, և սոքա թանկագին տեղեկութիւններ են տալիս Հայաստանի պատմութեան մասին։ Ճշմարիտ է, թէպէտ հայկական գրականութիւնը բանաստեղծական գրվածներով այնքան հարուստ չէ, բայց պահպանված յիշատակարանների մէջ, բացի հոգևոր բանաստեղծութենից, որ նշանաւոր է իւր հազվագիւտ գեղեցկութիւններով, պէտք է յիշել Ներսէս Կլայեցու Եդեսիայի կործանման վերա յօրինված Ողբը, Մխիթար Գօշի և Վարդանի առակները; սոքա բոլորը պատկանում են 13 դարին։ 13 դարը սկզբից մինչև 14 դարը նշանաւոր է առհասարակ պատմագրական գրվածներով։ Այն պատմագրողներից, որոնց գրվածները ազատվելով մահմետականների յարձակմունքից հասել են մինչև մեր օրերը, առաւել նշանաւորները սոքա են համարվում. Յովհաննէս կաթողիկոսի հեղինակութիւնը, որը 10 դարում Հայերի կաթողիկոսն էր, և որը գրել է Հայաստանի պատմութիւնը Հայկից սկսած մինչև 920 թիւը; նորա պատմութիւնը գերազանցվում է իւր ներդաշնակութեամբ, ճշտութեամբ և սրտառուչ պերճախօսութեամբ; Մատթէոս երէց Եդեսիայի, որ ապրումէր 12 դարում, որը շարունակեց վերոյիշված հեղինակի պատմութիւնը մինչև 1128 թիւը, առանձնապէս խաչակիր զօրքերի վերա խօսելով; Սմբատ, 14 դարում, որ Հայերի թագաւորների լիակատար պատմութիւնը գրեց և շատ տեղեկութիւններ է տալիս խաչակիրների պատերազմի մասին Մոնղոլների և Արաբների ընդդէմ։

Վերջապէս յիշենք և Աստուածաշունչի թարգմանութիւնը յունականից, որ կատարվեցաւ 70 մեկնիչների բնագրից; այս թարգմանութիւնը 433 թւին վերջացաւ և յայտնի է իւր պերճախօս պարզութեամբ և ճշտութեամբ:

Բայց մենք արդէն վերև յիշեցինք, որ Հայաստանի Լևոն VI-ի վերջին թագաւորի անբաղդութիւնը, որ գերի ընկաւ Եգիպտոսի սուլթան Շաբանի ձեռը, այս երկրի բոլորովին անկման սկիզբն էր: Պէտք է նկատել, որ հայկական ազգի անկման պատճառը միայն ազգային անկախութեան կորուստը չէր: Ամերիկայի գիւտը, որ համաշխարհական վաճառականութեան գործունէութեան համար նոր տեղեր բացեց, մեծամեծ փոփոխութիւններ արեց ազգերի այն յարաբերութիւնների մէջ, որոնք արդէն անյիշատակ ժամանակներից հաստատված էին: Այս անցքը արդարև մի մեծ յեղափոխութիւն էր բոլոր ասիական վաճառանոցների համար: Հայաստանը, որ այդ ժամանակ, գերազանցվում էր իւր բազմաթիւ վաճառականական կենտրոններով և գաղթականութիւններով, բոլոր միւս երկիրներից շատ վնասվեցաւ վաճառականութեան մէջ այդպիսի յեղափոխութեան ծագելուց: Կօլումբոսի ծառայութիւնը, ասումէ Կանտու պատմաբանը, չէ կայանում այնքան նորանում, որ նա աշխարհ գտաւ, այլ որ բաց արեց ծովային ճանապարհ այն վաճառականութեան համար, որը արդէն հին ժամանակներից միայն ցամաքային ճանապարհով էր կատարվում: Այս հակառակ ուղղութիւնը, որ ստացաւ այդ ժամանակում վաճառականութիւնը, ինչպէս արդէն ասացինք, Ասիայի վաճառականների մէջ մի բոլորովին յեղափոխութիւն արեց; բայց նոքա իւրեանց լինելութիւնը կրկին պահպանեցին, իւրեանց ներքին վաճառականութեամբ, մինչև այն ժամանակ, երբ Թուրքերի բռնակալութիւնը, պարսկական տէրութեան անիշխանութիւնը, Աֆղանի, Մարաթի և հիւսիսային Հնդկաստանի աւերմունքը բոլորովին ոչնչացրին նոցա:

Մինչև այդ ժամանակները Լևանտի բոլոր վաճառականութիւնը Միջերկրական ծովով և արևելքի կարաւաններով էր լինում: Գենուայի, Պիզայի և Վենետիկի նաւահանգիստները շատ դարեր շարունակ գլխաւոր կենդրոն էին համարվում հին աշխարհի երեք մասի ապրանքների համար: Նոցա նաւերով էին տանում Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկայի բոլոր ապրանքները և նոյնպէս արևմուտքը նոցա միջնորդութեամբ էր ստանում այդ հեռաւոր երկիրների հարստութիւնները: Բայց երբ 1497 թւին Վասկօ

դը-Գամա Հնդկաստանի ծովային ճանապարհը բացեց, նոյնպէս երբ գտան Ամերիկան, այդ գիւտերից օգուտ քաղելով Իտալիացիները, Պորտուգալացիները և Հօլանդացիները բոլոր ծովային վաճառականութիւն իւրեանց ձեռն առան, այն ժամանակ արդէն երեք խոշոր հասարակապետութեան նշանակութիւնը վայր ընկաւ և սոցա հետ միասին բոլոր բազմաթիւ հայկական կոնտօրները, որոնք գտնվում էին Միջերկրական ծովի և Եւքսինեան Պոնտոսի (Սև ծովի) ափերին և որոնց հետ այդ հասարակապետութիւնները անդադար յարաբերութիւններ ունէին: Այսպէս մի դարի անցնելուց յետոյ 1600 թւին Հայերը բոլորովին կորցրին իւրեանց վաճառականութիւնը, մի և նոյն ժամանակ և բոլոր իւրեանց մտաւոր գործունէութիւնը և իւրեանց ազգային անկախութիւնը: Ինչպէս վերև ասացինք, 17 դարի սկզբից Հայերը կրկին անգամ սկսեցին վերածնվել: Այդ ժամանակից նոցա մէջ կրկին անգամ սկսեց աւելի և աւելի ծագել մտաւոր շարժումն և մեր ժամանակներում այդ շարժումն արդէն հաղորդված է բոլոր Հայերին և միացնում է միմեանց հետ զգացողութեամբ և մտքերով բոլորեցուն, որոնք ցրված են Եւրոպայում, Ասիայում և Աֆրիկայում, և այս պատճառով կարելի է նոցա համար լաւ ապագա նախագուշակել: Ամեն տեղ, ուր բազմութեամբ բնակվում են Հայերը, նոքա հիմնում են դպրատուններ, գրքատուններ, ուսումնական ընկերութիւններ, օրագիրներ և ուսումնարաններ: Կոստանդնուպօլիսը, ուր 200 հազարից աւելի Հայեր կան, Թուրքաստանում այդ մտաւոր շարժման կենդրոնն է կազմում; այստեղ ամենից շատ են ուսումնական Հայերը, հրատարակվում են մի քանի օրագիրներ, ինչպէս Մասիսը, որ բոլոր Հայերի համար մի պաշտօնական օրագրի ձև ունի, որի խմբագրող—անօրինողը պ. Իւթիւճեանն իւր կրթութիւնը ստացել է Փարիզում. Նոյնպէս գերազանցվում են և միւս տեղերում Հայերը; սոցա կարգիցն է Զմիւռնիա, ուր հրատարակվում է Արշալոյս Արարատեան օրագիրը, որը Հայերի մէջ ամենահին օրագիրներից մին է և որի խմբագրողը պ. Լ. Բաղտասարեանն է; յետոյ Վենետիկ, Վիեննան, Մոսկվան, Փարիզը և փոքր ինչ ժամանակից, Թէոդոսիան, որ ասիական (sic) Ռուսաստանումն է,* ուր հրա-

* Գերմանական հասկացողութիւնը աշխարհագրութեան մասին: Այդ մեզ յիշեցնում է մի նամակի ծաղրալի հասցէն, որ ստացվել է Գերմանիայից մի տարու չափ առաջ. "Crimée, Theodosie, capitale de la Tatarié,,:

տպագրվում է Մասեաց Աղաւնի օրագիրը և ուր հիմնված է մի հայկական ուսումնարան պ. Խալիբեանի օգնութեամբ, որ զոհել է (?) մինչև 1,000,000 ֆրանկ և որտեղ ուսանում են մինչև 150 որբեգիր աշակերտներ: Նա իւր խելացի հայրենասիրական նպատակը (!?) կատարելու համար իւրան օգնական ընտրեց այդ քաղաքի հոգևորական առաջնորդին գիտնական վարդապետ Գաբրիէլ Այվազովսկուն: Վերջապէս Հայաստանի մէջ և Էջմիածնի վանքն է, որ գտնվում է Արարատի ստորոտում և կաթողիկոսի աթոռանիստն է, և ուր հայկական ուրիշ շարադրութիւնների վերա աւելանում են և շատ նորերը և հարստանում են այնտեղի գրքատան մէջ գտնված հին և հետաքրքիր ձեռագիրների թիւը:

Հայկական լեզուն, որը ինչպէս ասում են Հայաստանում, Նոյի ժամանակներից է մնացած, նախնական լեզուներից մին է: Բոլոր արևելեան լեզուներից միայն հայկականը ձախից դէպի աջ են գրում: Այս լեզուն պատկանում է լեզուների կովկասեան ընտանիքին, որը Ասիաի եօթն լեզուների գերդաստանի մէջ երկրորդ տեղ է բռնում; բայց հայկական լեզուն իւր բաղկացութեամբ ոչինչ յարաբերութիւն չունի այդ ասիական լեզուների հետ: Նորա մէջ աւելի շատ գտնվում են հնդկա—եւրոպական լեզուների արմատները և նա աւելի մօտ է Ֆիննների և հիւսիսային Ասիաի ժողովուրդների բարբառներին: Հայկական այբուբենը, որ 406 թւից մինչև այժմ անփոփոխ մնացել է, թւով 38 տառերից է բաղկանում; նոցանից 8-ը ձայնաւոր են, իսկ 30-ը բաղաձայն; բոլոր տառերը երկու տեսակ են. գլխագիր, որոնցով գրում էին միայն մինչև XI դարը, և նոտրագիր, որը շատ զանազան է գլխագրից, վերջինները XI դարում միայն սկսեցին գործածվել: Հայկական լեզուն շատ հարուստ է իւր ոճերով և ձևերով; նա սեռ չունի, նորա հոլովը բառերի վերջերի փոփոխութեամբ է շինվում, տաս հոլովմունքով, բայց կան յօդեր, որոնք բառի վերջն են դրվում, ինչպէս հիւսիսային Եւրոպաի բարբառներում: Այժմ ժողովուրդը չէ գործածում հին հայկական կամ գրաբար լեզուն; նա մնում է միայն հին գրքերում և ամենալաւ (?) հեղինակների գրվածներում: Հայկական հին լեզւի քերականութիւնը, նախադասութիւնների կազմութիւնը (որ շատ նման է յունականին) հասկանալու համար, նոյն իսկ Հայերից անգամ պահանջվում է, որ նախապէս ուսումնասիրեն լեզուն և յետոյ միայն կարողանում են հասկանալ: Հայերը անդադար յարաբերութիւններ ունենալով Արաբների, Պարսիկների և Յոյների հետ, շատ բառեր փոխ են առել նոցա-

նից; բայց պէտք է նկատել, որ այս փոխառութիւնները ոչինչ ներգործութիւն չեն ունեցել լեզուի ոգու վերայ: Հայկական նոր լեզուն կամ ժողովրդական լեզուն, որ կազմվեցաւ նորա անկման ժամանակում, շատ զանազանվումէ այն լեզուից, որով խօսումէին և գրումէին 4 դարից սկսած մինչև 12 դարը; և զանազանվում է, ոչ միայն քերականական ձևերով և նախադասութիւնների կազմութեամբ, այլ և բառերի նշանակութեամբ, որոնք այժմեան հայկական բարբառում բոլորովին ուրիշ միտք են առանում: Հայկական հին լեզւում գործ են ածվում համառօտ և շատ բազմակողմանի նախադասութիւնները; իսկ այժմեանի մէջ, Թուրքական լեզուի նման, գործ են ածվում երկար պարբերութիւններ: Բայց պէտք է ասել, որ այժմ աշխատումեն լեզուին մաքրութիւն տալու: Այս գործին առաջին անգամ զարկ տվեցին այն հայկական վարդապետները, որոնք 1717 թուին տեղափոխվեցան Վենետիկ Մխիթարեան անունով և որոնք այնտեղ սուրբ Ղազարի կղզու վերայ հիմնեցին իւրեանց վանքը և հայկական ազգի ուսումնականութեան և լուսաւորութեան կենդրոն շինեցին նորան: Այս ուղղութեան հետևումեն այժմ բոլոր հայկական գրողները: Մենք սահմանափակումենք այս սակաւաթիւ տեղեկութիւնները, որոնց հեշտ կարելի էր ընդարձակել, եթէ կամենայինք: Այս տեղեկութիւնները անկասկած այնքան բաւական են, որ կարող են հասկացողութիւն տալ հայկական այժմեան նախադաս մարդկիների ուղղութեան մասին, որով ցանկանումեն նոքա հաւասարվել արևմտեան քաղաքակրթութեան հետ: Եթէ մենք այս բազմանշան ձգտմունքին կնայենք նաև ընդհանուր աչքով, այն ժամանակ ևս մենք պէտք է աշխատենք պահպանելու նոցա; և աւելի մենք պէտք է խրախուսենք Հայերի այժմեան սերունդը, երբ տեսնումենք այն ջանքերը, որ գործ է դնում հայկական ազգի գործունեա մասը մեր լեզուն (Ֆրանսիերէն) սովորելու համար զանազան բառարանների միջնորդութեամբ և մեր գրականական հեղինակութիւնների թարգմանութիւններով իւրեանց լեզւով: Սորանով նոքա մի և նոյն ժամանակում կատարումեն մի ազնիւ գործ, նվիրելով իւր անձը իւր լեզւաշինութեան գործին:

Ֆ. ԴԻԿՐՕ:

ՕՏԱՐԵՐԿՐԵԱ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ:

—Հին և նոր աշխարհի Գրականութեան Պատմութիւն Հ. II, գիրք 1: Ֆրանսիական գրականութեան պատմութիւն, հե-

ղինակ. Վ. Կոստոմարովի: Ս. Պետրբ. 1864, գինը 1 ռ. 50 կ: Սոյն այս հեղինակը շինած ունի իտալական գրականութեան պատմութիւն: Ի հարկ է ֆրանսիական գրականութեան պատմութիւնը աւելի հեշտ էր շինել, քան իտալականը, որովհետեւ առաջինը թէ մշակված է աւելի եւ թէ պատմագրական հանգամանքներին նայելով իւր ընթացքում անհամեմատ աւելի սակաւ է ընկել զանազան ազդեցութիւնների տակ: Ուրեմն պ. Կոստոմարովի այս նոր աշխատութիւնը աւելի խիստ կրիտիկայի տակ է ընկնում եւ պ. Կոստոմարովը չէ կարողացել բաւականացնել այդ խիստ կրիտիկան:

—Անգլիական Վիլիամ Շէկսպիրի վերա գրված Վ. Հիւգոյի նոր շարադրութիւնը: (William Shakspeare. Par victor Hugo, Paris. Lacroix.): Այդ շարադրութիւնը, ինչպէս այդ շնորհալի հեղինակի բոլոր գրվածները, եւրոպական կրիտիկայի մէջ շատ զանազան դատողութիւններ հանեց: Սակայն մեզ համար ամենից նշանաւորները նոցանից—անգլիականներն են, եւ մենք պիտի ասենք, որ Athenaeum օրագիրը նորա վերա դովեստով է խօսում: Ի հարկէ այդ գիրքը ոչ շատ խիստ կրիտիկական է եւ ոչ խիստ պատմագրական; այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ միայն ճարտարախօս ոգեւորված ներբողը հանճարեղ բանաստեղծին, մի ուրիշ նոյնպէս շնորհալի բանաստեղծից գրված: Ահա ինչպէս էր գործը. Վ. Հիւգոյի որդին կամեցաւ Շէկսպիրը ֆրանսիական թարգմանութեամբ հրատարակել, իսկ հայրը ցանկացաւ այդ հրատարակութեան առաջաբան շինել, որից կազմվեցաւ մի ամբողջ շարադրութիւն, իւր մէջ բարձրացնելով բոլոր ժամանակակից կեանքի, գիտութեան եւ արհեստի գլխաւորագոյն խնդիրները: Ի հարկէ այդպիսի շարադրութիւնը չոր գերմանացի գրողին ախորժ չըպիտի գար եւ անհասկանալի կլինէր, բայց կենդանի մարդը կգտնէ նորա մէջ մտքի շատ լուսաւոր փայլմունք, մի կողմ դնելով շարադրութեան գեղեցիկ ոճը: Շէկսպիրի այս կենսագրութիւնը շատ նշանաւոր է, մանաւանդ Ֆրանսիայի բանաստեղծի հրաւէրը անգլիացի բանաստեղծին արձան կանգնելու: Երեւումէ, որ յատկապէս Շէկսպիրը այդ գրքում երկրորդ տեղ է բռնում:

—Oeuvres complètes de W. Shakspeare, trad. p. V. Huvo, (Շէկսպիրի գրվածների ամբողջ ժողովածու, Ֆրանսիական թարգմանութեամբ, հեղ. Ֆ. Վ. Հիւգոյի): Ահա այս իսկ ժողովածուին պիտի գեղեցիկ առաջաբան լինի վերոյիշված շարադրութիւնը: Նոյն ինքն թարգմանութիւնը պակաս նշանա-

ւոր չէ, թէ թարգմանութեամբ, և թէ բազմաթիւ օրինաւոր բացատրութիւններով։ Թարգմանողը բաժին բաժին է անում Շէկսպիրի գործերը նորա հիմնական բնաւորութեան համաձայն։ «Հայրենիք (Patrie)», անունով բաժնում դրված են այս դրամաները. Ռիչարդ II, Հենրիկոս IV, V VI և VIII, որոնք յիրաւի շատ ճարտար կերպով լցված են ազգային զգացմունքով, և որտեղ թափանցում են բանաստեղծի քաղաքական կարծիքները և համակրութիւնները։

—Գրողների և արհեստագէտների բնախօսութիւն (Physiologie des écrivains et des artistes), կամ բնական կրիտիկաի փորձ, հեղինակ. Դեշանէլի, Փարիզ։ Գրքի վերնագիրը փոքր ինչ անորոշ է, բայց գիրքը ըստ ինքեան շատ օրինաւոր է։ Հեղինակը աշխատում է բացայայտել այն միջոցները, որ մի հեղինակի գրուածներից կարելի լինի որոշել, ոչ թէ միայն նորա հոգեկան, այլ և նորա բնական, ազգակցական յատկութիւնները, բնաւորութիւնը, կրթութիւնը, առողջութիւնը, կեանքի կերպը, և այլն։ Թէպէտ այդ ամենը ի հարկէ դեռ չէ կարող ներկայացնել մեզ պահանջելի գիտնական ճշդութիւն, բայց հեղինակի նշանաւոր արժանաւորութիւնը այն է, որ նա ջանք է անում անդադար ցոյց տալ բնախօսութեան բնական և նիւթական գործողների նշանակութիւնը մարդկս հոգեկան արտայայտութիւնների և որպիսութիւնների մէջ։

—Les langues et les races, H. Chavèe. (Լեզուներ և ցեղեր, հեղինակ. Հ. Շավէ)։ Այս ուսումնականը փորձել է փորձ մարդկային ցեղերը և նոցա բնաւորութիւնները ուսումնասիրելու լեզուագիտութեան միջնորդութեամբ։

—Annuaire de la Charité, E. Knoepflin (Բարեգործութեան տարեգրութիւն, հեղ. Կնեօպֆլինի, Փարիզ)։ Ֆրանսիացիների ժամանակակից պատուական հեղինակութիւններից մին է իւր հայեացքով։ Մեր առաջ դուրս է բերվում բարեգործութեան, հասարակաց խնամատարութեան վիճակը, և այլն, առաւելապէս Փարիզում, և ծանօթացնում է մեզ այն կառավարչական կարգադրութիւնների հետ, որոնք այդ նպատակով են գործ դնվում։ Մենք շատ ցանկանում էինք լաւ ծանօթացնել ընթերցողին այս գրքի հետ, որովհետև մենք հաւաստի ենք, թէ հազիւ կգտնվի մեզ համար այսպիսի մի կարևոր և շահաւէտ խնդիր։ Բայց մեր օրագիրը սակաւաթերթ է, և մենք պիտի միայն ասենք, որ Փարիզի այդ տեսակ հիմնարկութիւնները այն յատկութիւններն ու-

նըն, որ շատ սակաւ է լինում, որ աղքատը իւր սովորական տեղից, ընտանիքից, հասարակութենից, և այլն, հեռացած լինի, ինչպէս Անգլիայի մէջ: Ահա այդ հիմնարկութիւններից գլխաւորները. հիւանդանոցներ, այնպիսի հիմնարկութիւններ, որոնք ձրիաբար դեղեր են բաշխում և բժշկական խորհուրդներ են տալիս, հիւանդանոց նոր առողջացածների համար, ուր նոքա հանգստա հզօրանում են; ծեր մարդիկների համար տնանկանոց, իսկ պառաւ կանանց համար la salpètrière (հիւանդանոց); վերջապէս առանձին գերեզմանատուն չքաւորների համար, ուր ձրիաբար են թաղում: Մինչև անգամ այն ծնողների որդիներ, որոնք նոցա կրթութեան համար կարողութիւն չունին, ուղարկվում են այնպիսի ընտանիքների մօտ, որոնք այդպէս բաներով են պարապում: Չքաւորների կողմից Փարիզը քսան թաղ է բաժանվում: Նոցանից իւրաքանչիւրի մէջ հացի, գինու և մսի առանձին մասնաւոր կենդրոնական մեծ վաճառանոցներ (депо) կան, որտեղից չքաւորները արժան գնով կարող են այդ ուտելեղէնները առնել: Նոցա եկամուտը առ հասարակ 7 միլիօն մանէթ արծաթ է և տարին գոնէ մինչև 100,000 մարդկան են օգնում: Այդ հիմնարկութիւններին հարկաւոր փողը պատշաճաւոր աղբիւրից է առաջանում, այն հարկից, որ դրված է շուայտութեան կամ իրերի վերայ: Բայց բացի սորանից Փարիզում շատ մասնաւոր բարեգործական տեղեր կան. ի հարկէ դոցանից աւելի շահաւէտ իւր նպատակով Oeuvres de dixaines տեղն է համարվում: Նա հիմնված է 1850 թւից և նորա գործն այն է, որ իւրաքանչիւր 10 ունևոր ընտանիքը յօժարակամ ընկերութիւն են կազմում իւրեանց չքաւոր դրացիներին օգնելու նպատակով: Այդ բարեգործական հիմնարկութիւնը կանանց գործ է և շատ լաւ կերպով են առաջ տանում. իւրաքանչիւր dixaineը (տասանոցը) իւր վերայ է առնում իւր շրջակայում գտնված մի չքաւոր ընտանիքի վերա կատարեալ հոգս տանելու և ջանք է անում օգնել նորան ամեն կերպով: Այժմ Փարիզում 40 այդպիսի dixaines-ներն են գտնվում:

—Պատերազմ փիլիսոփայական, հասարակական և կրօնական հայեացքով քննված, (La guerre considérée . aupoint de vue philosoph. social, et religion.) Աբբա Գրարօզի աշխատութիւն:

Հեղինակը ամեն կողմից քննում է այս մարդասպանական խնդիրը և ամեն կողմից հարստահարում է այդ չար գործը, որ դեռ ևս մնում է այժմեան աշխարհում: Որքան կորուստ է հասցրել պատերազմը մարդկութեան! —

—Պ. Գէօրգը հրատարակեց երկու մեծ հատորներ այս անուանով "Das Leben in den Vereinigten Staaten Cur Beurteilung von Amerikas Gegenvart und Zukunft,, (Կեանք Ամերիկայի Միացած Նահանգների մէջ)։ Աստուած՛ ինչ չկայ այնտեղ! գիրքը բովանդակում է 1300 երես, բայց այս բոլորը չէ, որովհետև պ. Գէօրգը ասել է ոչ թէ 1, բայց 100-ը գլխից։ Գրքի ներքին բովանդակութեան նայելով, հեղինակը անկասկած շատ մօտ և մանրամասնաբար ծանօթ է հիւսիսային Ամերիկայի ժամանակակից դրութեան։ Գլուխների անունները միայն կարող են ցոյց տալ տեղեկութիւնների չափազանց բազմատեսակութիւնը։ Ահա նոցանից մի քանիները. Ժողովրդական սովորութիւններ, Կրթութիւն և Ուսումնարաններ, Գիտութիւն և Արհեստներ, Կրօն և Եկեղեցի, Լուսաւորութիւն և Բարոյականութիւն, Այր—մարդիկ, Կին—մարդիկ, Մանուկներ, Տպագրութեան ազատութիւն, և այլն։ Մինչև անգամ Նիագարեան ջրվէժի մասին կան մանրամասն տեղեկութիւններ։ Բայց չափազանց մեծ է գիրքը և եթէ պ. Գէօրգը կէս անէր գիրքը, բովանդակութիւնը ոչինչ չէր կորցնի։ Որովհետև ասելով մի գլուխը, օրինակ, Ամերիկայի ժողովրդական սովորութիւնների վերա, նա առաջ է բերում ընդհանուր դատողութիւններ մարդի, ազգութեան վերա, և այսպէս է անում ամեն գլուխներում։ Այնու ամենայնիւ, ընթերցողը կիմանայ, ինչ պէտք բաց թողնէ և ինչ կարդայ գրքի մէջ և պ. Գէօրգի աշխատութիւնը Միացած—Նահանգների տեղեկութիւնների ամենահարուստ ժողովածու է և ցանկացողը ամեն բան կարող է գտնել նորա մէջ ամերիկական կեանքի մասին։

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ։

—Руководство къ изученію дѣтскихъ болѣзней, доктора А. Фогеля, приватъ—доцента въ Мюнхенѣ, перев. подъ редакціею доктора М. Зеленскаго. (Գիրք երեխաների հիւանդութիւնները ուսումնասիրելու, դոկտոր Ա. Ֆօգելի, ռուսերէն թարգմանեց Մ. Զելենսկին, երկու մասեր։ Ս. Պետերբուրգ, 1865)։ Երեխաների անհամար հիւանդութիւններ և մահի պատճառներ արժանի էր վաղուց ուսումնասիրելու և դոցա դարման տանելու։ Գերմանացի դոկտորը արժանապէս աշխատել է այս մասին, իսկ պ. Զելենսկին նուիրել է իւր հայրենակիցներին մի թանկագին ընծա իւր թարգմանութեամբ և սեփական մեկնութիւններով։ Այս գիրքը ոչ միայն շատ և շատ օգտակար է բոլոր

բժիշկներին, բայց և կամենայինք, որ սորան օգնութով կ'կարդայ ամեն լուսաւորված մարդը:

— Գ. Գլեչչեսվը հրատարակեց մի գեղեցիկ մանկական գիրք: Մանուկները շատ լաւ ընթերցանութիւն կգտնեն այդ գրքի մէջ, որտեղ տպված են Գրիմի 5 առակներ, Անդերսենի 3 առակներ, Գլեչչեսվի և Ռեյչի քանի մի ոտանաւորներ, և այլն:

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՏԱՐԱԾՈՂ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ:

Անդրկովկասեան բոլոր քաղաքները, որոնք գտնվում են Ռուսաստանի իշխանութեան տակ, դրել են իւրեանց լուսաւորութեան յոյսերը Թիֆլիսի վերա. պատճառ սա է բոլոր հայաբնակ քաղաքների կենդրոն Անդրկովկասեան կողմը և սորանից պիտի բաշխէր լուսաւորութեան և բարոյական կրթութեան ճանապարհ: Սորանից սպասում են Հայերը ունենալ արժանաւոր քահանաներ, պատուաւոր քաղաքացիներ, բանագէտ դաստիարակներ իւրեանց ուսումնարանների համար:

Բայց ցաւ է ասել, այստեղ մեր ժողովրդի բարոյական կրթութիւնը շատ կաղ է գնում: Ժողովուրդը ընկղմած է սնոտիապաշտութեան մէջ, առանձնապաս Հայերից իւրաքանչիւրը սառնասրտութեամբ է նայում ուսումնականներին և նոցա գործողութիւններին: Ի հարկէ ժողովրդական վարժարանների, հասարակաց ուսումնարանների չլինելը արմատ է գլխաւորապէս մեր ընդհանուր թշվառութեան: Ուսումնարաններով միայն կարելի կլինէր վերցնել սնոտիապաշտութիւնը ժողովրդի երեսից . . . .

. . . .

Հարկաւոր են ուսումնարաններ, հարկաւոր է ազգային բարոյական կրթութիւն:

Թիֆլիսի բոլոր ժողովուրդը մենք բաժանում ենք երեք մասը իւր կրթութեան և դաստիարակութեան համեմատ: Առաջին կարգի ժողովուրդը մենք համարում ենք ազնուականներին և հարուստ մեծատուններին; երկրորդ կարգի են քաղաքացիները կամ վաճառականները; երրորդ կարգի են արհեստաւորները և ստորին մշակող ամբոխը:

Առաջին կարգի ժողովրդի երեխաները ստանում են ուսումն և կրթութիւն տան մէջ հրաւիրված օտարազգի ուսուցիչների և կամ օտարազգի պանսիոններում, բոլորովին հակառակ Հայերի

հողու և բնաւորութեան օտարազգերի լեզուներով։ Նոքա հեռանալով լեզուից, հեռանում են և օտարանում են և ազգից. . . . . Երկրորդ կարգի ժողովուրդը, կամենալով նմանել կամ հաւասարվել առաջիններին, աշխատում է հասնել նոցա, բայց չկարողանալով մնում է թերատ և կիսատ ուսման մէջ, գայթակղված և մոլորված։ Երրորդ կարգի ժողովուրդը, անձեռնահաս լինելով որ և իցէ կրթութիւն ստանալու, ընկղմած է տգիտապաշտութեան մէջ։ (Հայերի մեծ մասը այս ժողովուրդ է կազմում)։

Հայկական Ներսիսեան ուսումնարանը (որտեղ ուսում են առնում 263 աշակերտ) պիտի մեծ օգուտ բերէր Հայերին երջանկայիշատակ հիմնադրի նպատակի համեմատ, եթէ մեր Հայերը կամենային աշխատել բարեկարգելու նորա ներքին և արտաքին միջոցները, ուսումնական և տնտեսական կառավարութիւնը, բայց

. . . .

Մենք մի օր ցաւեցրել էինք մեր մտածող ընթերցողներին հաղորդելով նոցա, որ Հայկական Ներսիսեան ուսումնարանում հայկական պատմութիւնը մնում է առանց ուսուցչի; այսօր ուրախ ենք նոցա յայտնելով, որ հայկական պատմութեան ուսուցիչը արդէն կարգվել է, և թէ ինչպէս կգնայ գործը—կասենք իւր ժամանակին։

Եկեղեցական ծխական ուսումնարանները, որոնք նոյնպէս հիմնվել են անմոռանալի Ներսէսի ձեռով այն նպատակով, որ իբրև նախակրթական վարժարաններ լինին Ներսիսեան ուսումնարանի համար, բոլորովին բարձի թողի են արված հոգաբարձուների վերահսկողութիւնից։ Վերջին ժամանակ Թիֆլիսում ծխական ուսումնարանների խնդիրը նորէն բարձրացաւ, մինչև անգամ տպագրութեամբ ևս խօսվեցաւ, բայց անբաղդաբար, հազիւ բարձրացած այդ խնդիրը նոյնժամայն արդէն վայր ընկաւ։ Այսպիսի է արդէն գրեթէ բոլոր մեր ուսումնարանական խնդիրների վախճանը։ Մինչև երբ՞. . . . Ահա այդ ծխական ուսումնարանները իւր աշակերտների թւով; մասնաւոր ուսումնարանների աշակերտների թւերի մասին յանձն չենք առնում պատասխանատու լինել։ Գուցէ մեր ընթերցողներին յայտնի է թէ ինչ դժուարութիւններ կան այդ թւերը հաւաքելու, երբ մեր ուղարկված մարդիկներին մին ասում է թէ դիրեկցիայում կգտնենք նորա աշակերտների թիւը, միւսը թէ ինչին է պէտք մեզ նորա աշա-

կերտների թիւը, և այն և այն։

1) Սուրբ Գէորգի եկեղեցու ուսումնարանը, ուրեղ կան 45 աշակերտներ; 2) Մողնու եկեղեցու ուսումնարանը ունի 30 աշակերտ; 3) Նորաշէնի ուսումնարանը ունի նոյնպէս 30 աշակերտ; 4) Սուրբ Նշանինը ունի մօտ 40 աշակերտ; 5) Ջըրկինեանց եկեղեցին ունի մօտ 30 աշակերտ; 6) Կուկիու եկեղեցին* ունի մօտ 40 աշակերտ; 7) Սուրբ Կարապետի եկեղեցին ունի 30 աշակերտ; 8) Սուրբ Մինասի ուսումնարանում կան 35 աշակերտներ; 9) Շամքորեցիների եկեղեցին ունի մօտ 30 աշակերտ։ Այս ուսումնարաններում, որոնց մասին ասված է երկու խօսք Հայկ. Աշխար. Կռունկի №№-ում (երես 119), դաստիարակութիւնը շատ թոյլ է լինում. երեք չորս տարվան մէջ երեխան այս տեղերում հազիւ թէ կարողանում է անսխալ կարդալ սովորած լինել հայկական լեզուով, թող թէ կարողանում լինի բան հասկանալ գրքից կամ արտագրել անսխալ որ և իցէ բնագրից մի յօդված, այն ինչ Սաղմոսի և Ժամագրքի մեծ մասը անգիր թութակի նման դուրս է ասում գլխից ոչինչ չհասկանալով։ Մենք միտք չունինք մեղադրելու այդ ուսուցիչներին, որովհետև հինգ մանէթով տարանից աւելի ի հարկէ չէ կարելի պահանջել. նամանաւանդ որ յիշված ուսուցիչներից շատերը հոգևորական դասից լինելով իւրեանց պարապ ժամանակներին են միայն պարապում աշակերտների հետ և իւ րեանց օգնականութեան համար պատրաստում սաղմոսներ սովորեցնելով, որ յետոյ աղօթք անեն քահանաների հետ ժողովուրդի համար . . . .

Թիֆլիսում փոքր ինչ առաջացած հայկական հոգով կրթարանը պ. Տէր Յակովբեանի պանսիօնն է, ուրեղ ուսանում են մօտ 40 աշակերտ Թիֆլիսցիների և օտարաքաղաքացիների որդիները։ Այստեղ բաւական առաջադիմութիւն են ցոյց տալիս

---

* Այս ուսումնարանը թէպէտ դնում ենք եկեղեցական ծխական ուսումնարանների թւում, բայց սա հիմնվել է 1863 թւին Թիֆլիսի քաղաքացի Իսահակ Թանդօյեանի հոգատարութեամբ նորա սեփական ծախսով։ Պ. Թանդօյեանը շինել է երեք սենեակներ Կուկիու սուրբ Աստուածածնի եկեղեցական գետնի վերա և իւր ծախսով ապահովացնում է ուսուցչի ռոճիկը, նաև խոստացած է իւր ծախսով սկսել և շինել եկեղեցին որքան կկարողանայ և կկամենայ, նոյնպէս յաւիտեան ապահովացնել իւր հիմնված ուսումնարանի գոյութիւնը մի նշանաւոր գումարով։

աշակերտները թէ հայերէնում և թէ օտար լեզուներում: Բայց Թիֆլիզեցիները սովորութիւն ունին ասելու թէ "ինչ ուզում է լինի, մինչև Հայ է. օտարազգիների պանսիոնների բանը ուրիշ է, առանձին ուրիշ: Այլ Ֆրանսիացու կամ ուրիշ ազգի մարդի մօտ աւելի շատ կսովորէ, գոնէ խօսել կսովորէ, քան թէ մեր Հայի մօտ: Հայերից ով է մարդ դարձել,,: Վերջին ժամանակ բաց արեց երկթևեկ աշակերտների ուսումնարան պ. Պետրոս Շանշեանը: Այժմ արդէն ունի 16 աշակերտներ, և յոյս կայ, որ աւելանայ այդ թիւը:

Թիֆլիզում օտարազգիների մասնաւոր պանսիոնները բաւական բազմաթիւ են: Գլխաւորները սոքա են տղաների համար. պ. Կրիպիանուն, պ. Հակէնին, պ. Ժէնուլին, պ. Ֆուլկին, և պ. Բարրէլին: Աղջիկների համար կան հետևեալ պանսիոնները. տիկին Ֆավրին, տ. Եանսկուն, տ. Բիօշին, և այլն: Հայկական չքաւոր աղջիկների համար հիմնվեցան վերջին ժամանակում երկու ուսումնարան, մին Բեթղեհեմի եկեղեցու մօտ, պ. դօկտոր Տէր Գրիգորեանի և արժանապատիւ Տէր Գրիգոր քահանա Բարսեղեանի աշխատութեամբ, միւսը տիկին Յովհաննիսեանու աշխատութեամբ, որ կոչվում է սուրբ Գայանէի անունով: Մասնաւոր պանսիոններում հայկական լեզուի դասատւութիւնը նոյնպէս յետ է մնում, երբեմն անունով է միայն ուսուցանվում: Բայց օտարոտին և վրդովեցնողը այն է, որ Թիֆլիսում ամենքեան կարողանում են պանսիոն բաց անել, ինչպէս ամենքեան կարողանում են ուսուցիչ դառնալ: Եթէ մարդը ոչինչ հնար չէ գտնում ապրելու, աւելի համարձակը սկսում է պանսիոն բաց անել, միւսը սկսում է ուսուցիչ լինել, և ինչ տեսակ ազգանուններ են պատահում թէ ուսուցիչների և թէ պանսիոնատէրերի մէջ? Թիֆլիսեցիներից ոմանք գանգատվում են, որ կրթութիւնը թանկ է նստում. պանսիոններին տիկին Ֆուլկը առաջարկում է "Кавказъ,, լրագրի մէջ (սեպտեմ. 12), որ նա ուսուցանում է բոլոր (?) լեզուները և գիտութիւնները, գինն է 6 մանէթ: Տեսնում էք--տ. Ֆուլկը ոչ մի տեղ չէր համարձակվի այսպիսի ծանուցում տալ, բայց Թիֆլիսում կարելի է . . . .

Թիֆլիսում տէրութենական գլխաւոր ուսումնարանները սոքա են. Կլասիկական Գիմնազիան, Րէալական Գիմնազիան, Զինուորական Ուսումնարան Մեժէվշչիկների ուսումնարանով, Աղջիկների Գիմնազիան, աղջիկների Անդրկովկասեան Ինստիտուտ, Սուրբ Նինօի Ուսումնարան, բարեգործական ուսումնարաններ, և այլն: Սոցա

մէջ ընդունվում են ամեն կարգի և ազգի երեխաները: Հայկական լեզուի մասին այսքան միայն կարող ենք ասել, որ եթէ Հայկական մանուկները պատրաստված և նախակրթված չեն մի ուրիշ տեղ առաջուց հայկական լեզուի կողմից, այս ուսումնարաններում կարելի չէ լինում այնքան առաջադիմութիւն ցոյց տալ այս լեզուից, թէև կարգված կան ուսուցիչները և ցանկութիւն կայ, որ Հայերը իմանան իւր լեզուն:

Թիֆլիսում կան նոյնպէս հայ մասնաւոր անձների առանձին ուսումնարաններ . . . . . . Այս ուսումնարանները սոքա են . պ. Նէլախեան Կարապետ վարժապետին, որ ունի մօտ 40 աշակերտ; Յարութիւն վարժապետի մօտ կան 40 աշակերտ; պ. Եղիշէգեանը և ընկ. ունին մօտ 20 աշակերտ; պ. Ամիրաղեանը (գիմնազիստ) և ընկ. ունին մօտ 40 աշակերտ; պ. Եզզամանեանը և ընկ: ունին 40 աշակերտ; պ. Մ. Տ. Գրիգորեանը ունի 25 աշակերտ; պ. Սողոմոն Գ.գրաշէնի տիրացուն ունի 40 աշակերտ; պ. Մեհրաբեանը ունի 10 աշակերտ; պ. Սողոմոն Եսիկեանը ունի 25 աշակերտ; պ. Ներսէս Մելիքեանը ունի 15 աշակերտ; պ. Տ. Թովմասեանը և ընկ. ունին 24 աշակերտ, պ. Տ. Մկրտչեանը ունի 30 աշակերտ; Տ. Գրիգորեան Եղիշէ քահանան ունի 15 աշակերտ, և ուրիշները: Սոցա մօտ սովորողները կլինին մօտ 400 աշակերտ: Սոցա դասատուութեան ձևերը զանազան են և կարող ենք ասել, որ իւրաքանչիւրը ուսուցանում է, կրթում է իւր ճաշակին համեմատ: Սոցանից շատերը երեխաների հետ վարվում են այնպէս թոյլ, որ կարելի չէ մեծ օգուտ սպասել աշակերտների համար: Ուսուցիչները աշխատում են աշակերտներին սիրելի դառնալ զանազան հնարներով: Ի հարկէ երեխաներին ևս այդ է հարկաւոր, միայն թէ սոցանից խստութեամբ ոչ՛ինչ չպահանջվի: Այդ կերպ մնոտի դասատւու-

. . . .

. . . .

. . . .

. . . .

Բոլոր հոգով, կատարեալ անկեղծութեամբ ցանկանում ենք մեր մանուկներին մի նոր բարելաւ ապագա, բայց այնու ամենայնիւ մենք կարծում ենք, որ Ներսիսեան ուսումնարանում ոչ ոք կարող չէ և չպիտի ուսուցանէ չորս իւրան անծանօթ առարկաներ....

ԻՇԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ:

ՄԱՆՐԱԼՈՒՐՆԵՐ :

—Նոր տարու հանդիսակատարութիւնը զանազան ազգերի մէջ: Նոր տարու հանդիսակատարութիւնը նշանաւոր է Ֆրանսիաի մէջ շօկօլադի, կօնֆետների, խաղալիքների և ամեն տեսակ ընծաների բազմութեամբ: Այդ օրում մարդիկ պարտական են այնտեղ անշուշտ ընծա բերել բոլոր ծանօթ կանանց; թէև մի քաղցր զվարճութիւն է առ հասարակ ընծա տալ գեղեցիկ սեռին, այնուամենայնիւ հարկաւոր է խոստովանել, որ այդ օրը ծանր է լինում մարդիկների գրպանների համար Ֆրանսիաի մէջ: Փարիզում մանաւանդ տարածված է ծանօթներին ընծաներ տալու սովորութիւնը նոր տարու օրը: Այս տարի մի օրիորդ, որ չէ պատկանում բարձր հասարակութեան, բայց Փարիզեան demimonde-ի (կիսաշխարհի) մէջ պատուաւոր տեղ ունի, ստացաւ իւր սիրելի պատուողից մի ընծա, որ պիտի զարմացնէ ամենեցուն, այն է. մի բօնբօնիեր (կօնֆետների զամբիւղ), որ արժէր քսան հազար ֆրանկ: Այս գործի վերա բոլոր Փարիզը խօսումէր: Պ. X. գնել էր Բուասիօի մօտ մեծ զամբիւղ և լցրել էր նորան կօնֆետներով, բայց չբաւականալով սորանից, նա հնարել էր առաւել քաղցր բան իւր դուլսինէի սրտի համար. նա դրել էր ամեն կօնֆետի թղթի մէջ մի մի ոսկի, և հաշւից երևեցաւ, որ զամբիւղը պարունակել էր 50,000 ֆրանկ, այսինքն 12,500 մանէթ: Ի հարկէ Պ. X-ի սիրելի ընծան ընդունված էր օրիորդի կողմից ամենաքնքոյշ սէրով....

—Նիւ-Եօրկում (Ամերիկաի մէջ) նոր տարու գլխաւոր զարդն մադէրա գինի է; այս քաղաքում չէ ընդունված այցելական տոմսակներ ուղարկելու սովորութիւնը; այր—մարդիկ պարտական են այցելութիւն անել անձամբ ծանօթ կանանց, որոնք առաւօտեան ինն ժամից, հագված որպէս բալի համար, սպասումեն հիւրերին հիւրանոցում: Հիւրանոցում կան ամեն քաղցրեղէններ և մադէրը: Այցելութեան ժամին սիրելի տանտիկինը անշուշտ առաջարկումէ իւր հիւրին գինի: Չընդունել այդ գինի, որ առաջարկումէ ինքն տանտիկինը իւր սիրուն ձեռով, համարվումէ անքաղաքավարութիւն, և ուրեմն հասկանալի է, թէ ինչ տրտում հետևանքներ պիտի ունենայ այսպիսի սովորութիւնը, եթէ մտաբերենք, որ իւրաքանչիւր ջենտըլմէնը կարողէ նոր տարին մօտ 50 տեղ այցելութիւն անել և ամեն տեղ մնալ տաս րոպէ:

—Պերուի մէջ այցելութիւն չեն անում; այնտեղ Նոր տարին հանդիպելու համար հաւաքւում են հրապարակների մէջ, ուր դասաւորած են երկայն սեղաններ: Այս ուրախալի տօնախմբութիւնները սկսւում են դեկտեմբերի 31-ին երեկոյից և շարունակւում են բոլոր գիշեր: Այս գիշերին, Նոր տարու հասնելու րոպէին արձակւում են հրացանները; ամենքեան սկսում են միմեանց գգւել և համբուրել; այնուհետև սկսւում են երգեր, պարեր, խմելը և խնջոյքը և շարունակւում են, մինչև որ արեգակի լոյսը կհարկադրէ նոցա ցրւելու: Նոր տարին Պարսկաստանում տօնւում է զարմանալի կերպով. առաւօտը արեգակի ծագման ժամին, քաշում են Շահին: Եթէ նորա ծանրութիւնը աւելացել է, համեմատաբար անցած տարու հետ, սա մեծ ընդհանուր ուրախութեան պատճառ է դառնում; ամենքեան ըսկսում են գգւել միմեանց և ընծայել ոսկեա ձուեր և ընծաներ; եթէ Շահը նախընթաց տարուց պակաս է քաշում, այդ օրը դառնում է տրտմութեան օր: Եթէ վերջապէս քաշը մնում է առաջվան, այն ժամանակ ընդհանուր ուրախութիւնը չէ յայտնվում, բայց իւրաքանչիւրը կարող է ուրախանալ իւր տան:

—Հնդկացիների մէջ Նոր տարու առաջին օրը չար ոգիների որս է կատարվում զարմանալի կերպով: Ամեն Հնդկացին ցցում է իւր տան առաջ բարձր փայտ (ձող, шестъ); սորա վերա կախում են ներկված և ոսկեձուլ թղթերով զարդարված զամբիւղը: Յետոյ վառում են ծանր և վատահոտ բաներ; սա ի հարկէ հանում է դևեր, որոնք մտնում են զամբիւղի մէջ: Յետոյ վառում են մեծ կրակ փայտի տակ և սորանից ի հարկէ բոլորովին խորովւում են թէ փայտը և թէ դևերը: Ահա այն ժամին սկսվում է ուրախութեան և միմեանց ներումն տալու ժամը, որովհետև Հնդկացիները պարտական են հաշտվել այդ օրին ամենեցուն հետ:—Չինաստանում Նոր տարին նոյնպէս իւր հանդիսակատարութիւն ունի: Մի քանի օր առաջ բոլոր կառավարչական տեղերը կողպւում են: Նոր տարու գիշերը հրացան արձակելով են անցկացնում: Առաւօտը քաղաքի չորս անկիւնում կամ տաճարում կրօնական պաշտօն է կատարվում: Այդ օր ամենքեան պիտի անշուշտ նոր շոր հագնեն; եթէ Չինացին հին շորով մնաց, նշանակում է նա բոլոր տարի պիտի աղքատ մնայ; այս պատճառով եթէ նա չունի նոր շորը գնելու կարողութիւն, նա գողանում է շորը: Նոր տարու տօները 10 օրեն շարունակվում Չինաստանում: Առաջին օրը

‘‘կար—հաա,, (թռչուններու օր)է: Երկրորդ օրը ‘‘կու—հաա,, (շների օր): Երրորդ օրը ‘‘չին—հաա,, (խոզերի օր): Չորրորդ օրը ‘‘եաճնկ—հաա,, (ոչխարների օր): Հինգերորդ օրը ‘‘նիւ—հաա,, (կովերի օր): Վեցերորդ օրը ‘‘մա—հաա,, (ձիերի օր): Եօթներորդ օրը ‘‘իէն—հաա,, (մարդի օր) նուիրված է մարդին, նոյնպէս և ութերորդ և իններորդ օրերը: Տասներորդ օրը նուիրված է բարձրագոյն էակին: Երբեմն տասն օրից աւելի էլ շարունակվում տօները:

—Իսկ Հայերի մէջ ինչ հանդէսով է կատարվում Նոր տարու օրը? Հայկաբաններին յայտնի է, որ Հայերի մէջ աւանդութիւն կայ, որպէս թէ Նոր տարու տօնախմբութիւնը սկսվել է աշտարակաշինութեան ժամանակից արդէն, Հայկի, մեր նահապետի և նախնու հրամանով, ի յիշատակ Հայկի Արարատ (Հայաստան) մտնելու և Նեբրովթի կամ Բելի իշխանութենից ազատվելու օրին—օգոստոսի 11-ին:

Նոր տարու օրին Հայերը, դեռ կռապաշտութեան ժամանակներում, ջրհեղեղի յիշատակն էին տօնում, մինչև այսօր շատ տեղ, մանաւանդ Կոստանդնոպոլսում, այս տօնախմբութիւնը յիշատակում են ջուրը ցայտելով և աղաւնիներ արձակելով Պայծառակերպութեան օրին: Որովհետև հայկական տարին պարունակում է իւր մէջ միայն 365 օր և բաղկանում է 12 երեսնօրեա ամիսներից և մէկ հնգօրեա ամսից, այս պատճառով Նոր տարու առաջին օրը փոփոխվում է և չորս տարին մի անգամ մի օրով յետ է ընկնում: 1460 տարիներ կազմում են մի շրջան: Այժմ Հայերը երրորդ շրջան ունին, որը կվերջանայ օգոստոսի 10-ին 1888 թուին, իսկ նոյն տարու և նոյն ամսի 11-ին կ'սկսվի չորրորդ շրջանը: Նոր տարու տօնախմբութեան կատարումն յունվարի առաջին օրին մտել է Հայերի մէջ, ինչպէս կարծում են հայագէտները, Կարոլոս IX ժամանակից և որովհետև Հռովմայեցիները ամեն ամսի առաջին օրը Kalendae (կալենդէ) էին կոչում, ուստի Հայերն էլ յունվարի առաջին օրը սկսեցին կոչել, ինչպէս կոչում են մինչև այժմ, նոյն անունով—Կաղանդ կամ Կալանդ: Բոլորովին ուրախ ենք որ այսպէս է եղել, իսկ եթէ մնացել էր առաջվան պէս մինչև այսօր, և այժմ մինը ցանկանար այդ տօնը Եւրոպացիների հետ տօնել, մեր սիրելի Հայերը այդ պիտի անշուշտ ազգուրացութիւն համարէին այն ազգասէր մարդի կողմից: Այնու ամենայնիւ մենք ցանկանում ենք բոլոր հոգով, որ մեր պաշտելի Հայերը,

ազատվելով ամեն հին նախապաշարմունքից, մօտենային և միանային եւրոպական մարդավայել լուսաւորած քաղաքակրթութեան։ Ոչ ոք իմաստուն Հայերից չէ կարող ուրանալ, որ մի ազգի նախապաշարմունքը և այնպիսի աննշան արտաքին ծէսերը, որոնք մի ազգութեան էական և կանոնաւոր յատկութիւններ չեն, արգելք են դառնում միշտ մի ուրիշ ազգի առաւել բարձր մարդավայել քաղաքակրթութիւնը ընդունելու։

—Բրանդէ դօկտորը Փրանսիական ակադեմիային ներկայացրեց մի վիճակագիր, որի մէջ նա բացատրում է հետագայ նշանաւոր անցքերը։ “Ես տեսել եմ, ասում է նա, մի և նոյն անձի մէջ երեք անգամ լետարգիկական շարունակ քուն։ Գեղեցիկ և բարձր հասակաւոր օրիորդ X . . . 18 տարեկան հասակին քնած էր քառասուն օր շարունակ; 1858 թւին նա 20 տարեկան հասակում քնած էր 50 օր; վերջապէս չորս տարուց յետոյ 1862 թւին Յարութեան առաւօտը նորան քնած գտան և զարթեցաւ 1863 թւին գարնան; ամբողջ տարին նա միանգամ միայն զարթեցաւ. իւր անբնական քնի ութերորդ օրում; այն ժամանակ օրիորդ X. գնաց իւր ծնողների մօտ, նոցա հետ նըստեցաւ, հաց կերաւ և այստեղ աթոռի վերայ քնեց։ Սա մի ամենախոր և զարմանալի քուն էր, որից անկարելի էր նորան զարթեցնել։ Նոյն այդ բանը ես նկատեցի ուրիշ երկու երիտասարդուհի կանանց վերայ—Մաքլէօտի և Լուիզա Գիւրանի վերայ։ Երևոյթները մի և նոյն էին. բազկի զարկը հանդարտ, շնչառութիւնը հազիւ թէ նկատվում էր, դէմքը բոլորովին առողջ, բայց ամեն անդամները բոլորովին թոյլ և անզգայ էին։ Լուիզա—Գիւրանին զարթեցնելու համար ամեն միջոցներ գործ դրեցին, բայց բոլորն ես իզուր եղաւ։ Այժմ այդ անբնական քնի փոխարարներգործութիւնը խնամելով, ես երբէք չեմ վըրդովել նորան. առաջին միջոցում քունը բաղդաւոր վերջն էր այն սաստիկ ջերմին, որ մտել էր բոլոր նորա մարմնի կազմութեան մէջ; վերջին միջոցում նա վերջ դրեց փորի ամենավըտանգաւոր խանգարման, որ արդէն նեղացնում էր հիւանդին, նորա լետարգիկական քնից մի ամիս առաջ։ Հրաշալի չէ միթէ այդ քունը, որ պահպանում է մարմնի գէրութիւնը և նորութիւնը, երբ մի և նոյն ժամանակ ամբողջ տարին հիւանդը մնում է առանց կերակրի և որը բժշկում է ծանր հիւանդութիւններից? (Дѣт. Чт. № 5. 1865)։

—Օտարոտի մտատանջութիւն։ 1865 թւի մարտ ամսին

Պրուսիայի մէջ Մէգօնի շրջակայքում վաղահաս մահով մեռաւ մի 60 տարեկան տիկին Պ.: 20 տարի շարունակ նա ապրում էր իւր տան մէջ առանց դուրս գալու տունից, ուտումէր միայն բանջարեղէն և պտուղներ, և այնպէս ատումէր միսը, որ մինչև անգամ չէր կարողանում նորան տեսնել, և չէր ընդունում նորան, ով միս էր ուտում: Նորա բակի մէջ տեղ շինուած էր սառն ջրի աւազան, որի մէջ վերջին ժամանակում անց էր կացնում նա իւր կեանքի մի մասը: Նորա հաղորդակցութիւնը ուրիշների հետ մի ամենափոքր լուսամուտի մէջով էր լինում, որի միւս կողմից նա մի քանի խօսքով պատասխանում էր եկողներին: Մինչև անգամ նորա բժիշկը, նորա պուլսը զննումէր այդ լուսամուտից և այդ էլ այն ժամանակ, եթէ բժիշկը այդ օրը միս չէր կերել; բժշկի գնալուց յետոյ, տիկինը մտնումէր շուտ իւր աւազանի մէջ այդ թեթև մերձաւորութենից մաքրվելու համար:

Բոլորը, ինչ որ չէր վերաբերվում նորա մտատանջութեան, նա չափազանց պարզ էր հասկանում և բոլորովին առողջ էր դատում փոքր գործերի մասին: Նա մի աղախին ունէր, որին սովորեցրել էր իւր պէս կեանք վարել, բացի աւազանի մէջ լողանալուց; նա առատութեամբ էր վարձատրում աղախնի աշխատանքները և իւր մահից յետոյ նորան մի փոքր գումար կտակեց: (Дѣт. Чт. № 7, 1865):

—Պրուսիայի մէջ կան տասն վեց հազար երեք հարիւր եօթանասուն ութ (16,378) մասնաւոր ուսումնարաններ, որոց մէջ սովորողները տղաներ և աղջիկներ ութսուն ութ հազար չորս հարիւր տասն և հինգ են (88,415): Իսկ պաշտօնական ուսումնարանները յիսուն հազար վեց հարիւր քառասուն հատ են (50,640), որոց մէջ սովորող տղաներ և աղջիկները երեք միլիօն, երեք հարիւր իննսուն հինգ հազար, երեք հարիւր քսան և վեց են (3,345,326): Ընդ ամենն վաթսուն եօթ հազար տասն և ութ (67,018) ուսումնարաններ, իսկ սովորողները երեք միլիօն, չորս հարիւր ութսուն երեք հազար, վեց հարիւր քառասուն մին (3,483,641) հատ են:

—Արևմտեան Եւրոպայում սովորութիւն կայ ամեն նոր ծնուածին մի քանի անուններ տալ: Այս օրերս Իսպանիայի թագուհի Իզաբելլան ծնեց որդի, որին 112 անուն են տվել:

—Ռուսական ''Համաշխարհային Տելեգրաֆ,, լրագրի № 1-ի մէջ կարդացինք, որ Եւրոպայում այնպիսի առևտրական տու-

ներ և ընկերութիւններ կան, որոնք մտնում են զանազան օրագիրների մէջ իւրեանց գործերի մասին միայն ծանուցմունքը տպելու գինը տարին 15 հազար, 50 հազար, 100 հազար, 500 հազար, նաև 700 հազար մանէթ: Այս թիւը փոքր ինչ աւելացրված է երևում:

—Ակնոցով ձի: "Courrier des Etats—Unis„ օրագրի մէջ պատմում են, որ Ֆիլադելֆիայի բնակիչներից մին ունէր մի ձի, որը 20 տարի հաւատարմութեամբ ծառայել էր նորան, բայց վերջը նորա աչքերի լոյսը նվազեցաւ այնքան, որ շատ անգամ վայր էր ընկնում գնալու ժամանակ: Ձիու տէրը նորա համար ակնոցներ շինել տվեց և դրեց նորա աչքերին: Ձին զգաց, որ նա այժմ լաւ էր տեսնում առաջվանից, հպարտութեամբ բարձրացրեց գլուխը, կարծես նոր զօրութիւն ստացած սկսեց հըպարտ և հաստատ քայլերով մանգալ: Քաղաքում նորան դօկտոր էին կանչում:

—Ռուսական լրագիրների մէջ կարդացինք բոլոր Ռուսաստանի ծախսը և մուտքը ներկա 1866 թւի համար: Բոլոր մուտքն է 362 միլիօն, 475 հազար, 811 մանէթ 35 կոպ. (362,475,811 մանէթ 35 կոպ.): Բոլոր ծախսն է 404 միլիօն, 68 հազար, 4 մանէթ, $39\frac{1}{4}$ կոպէկ, (404,068,004 մ. $39\frac{1}{4}$ կ.): Այս ընդհանուր ծախսից Զինուորական Նախարարութեան վերա գնում է 116 միլիօն, 592 հազար, 363 մանէթ, $22\frac{3}{4}$ կոպէկ, (116,592,363, մ. $22\frac{3}{4}$ կ.): Ազգային Լուսաւորութեան Նախարարութեան վերա գնում է 7 միլիօն, 62 հազար, 464 մանէթ, 59 կոպէկ (7,062,464 մ. 59 կ.): Կովկաս աշխարհի կառավարութեան վերա գնում է 4 միլիօն, 184 հազար, 212 մանէթ, $77\frac{1}{2}$ կոպէկ, (4,184,212 մ. $77\frac{1}{2}$ կ.): Տէրութենական զանազան պարտքերի պրօցենտների (շահի կամ տոկոսիքի) վերա գնում է 68 միլիօն, 586 հազար, 684 մանէթ, $40\frac{1}{4}$ կոպէկ, (68,586,684 մ. $40\frac{1}{4}$ կ.):

—Տարու սկիզբը զանազան ժամանակներում և զանազան ազգերի մէջ: Ֆրանսիայի մէջ տարին սկսվում էր հին ժամանակում մարտի 1-ից, յետոյ Քրիստոսի Ծնունդից (դեկտ. 25-ից); 1565 թւից միայն Կարոլոս IX-ի ժամանակից սկսեցին այնտեղ նոր տարի համարել յունվարի 1-ից: Անգլիացիները տարին սկսում էին Ծնունդից մինչև Վիլհելմ Նվաճողի ժամանակը: 1752 թւից ընդունված է յունվարի 1-ից: Իտալացիները մի ժամանակ տարին սկսում էին Ծնունդից, յետոյ — մարտ ամսից:

Յոյները տարին սկսում են սեպտեմբերի 1-ից: Չինացիները և Օստ-Ինդեան (հնդկական) ազգերը տարին սկսում են մարտից: Պարսիկների մէջ տարին սկսվում է Ֆերուարդին ամսի 1-ից, որ մեր յունիս ամիսն է: Թուրքերը սկսում են այն օրից, երբ արեգակը կմտնէ խոյի մէջ: Հրէաները տարին սկսում են սեպտեմբերի 9-ից: Հայկական տարին, ինչպէս ասացինք, սկսվում է օգոստոսի (նաւասարդի) 11-ից:

ԱՖՕՐԻԶՄՆԵՐ ԿԱՄ ԿԱՐՃ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՆԿԱՏՄՈՒՆՔ:

Կան մարդիկ, որոնք շատ ուրախ են, եթէ իւրեանց կեղտը միշտ երեսին կպցնեն, նաև տպագրութեամբ, միայն թէ խօսակցութեան առարկա լինին:

Այն շները, որոնց առաջարկում էք այնպիսի մուռդ, որի ճաշակ նոքա չունին, կծում են ձեզ:

Փիլիսոփան իմաստի և ճշմարտութեան սիրողն է: Վօլտէր:

Խելացի լինել նշանակում է հեռանալ ցած և անարգ անձներից, խելացնորներից, չարերից, նախանձողներից: Վօլտէր:

Երբ շները մի գեղեցիկ կառք են տեսնում և, չնայելով ամենամեծ աշխատանքին, չեն կարողանում հասնել նորան, այնուհետև յոգնած և լեզուն դուրս գցած սկսում են հաչել այն կառքի վերա:

Ամեն գործի վերա զարմանալը բթամիտներին է վիճակված:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ:

Հետևեալ տեղեկութիւնները կարդացինք ռուսական ‘‘Кавказъ,, լրագրի № 12-ի մէջ:

‘‘Նորին Կայսերական Բարձրութիւնը Մեծ Դուքս Կովկասեան Փոխարքան, Էջմիածնի Ծայրագոյն Պատրիարքի ընտրութիւնը աչքի առաջ ունենալով, ցանկանալով Անդրկովկասեան Հայերին այնպիսի միջոցներ տալ, որ բոլորովին կանոնաւոր և օրէնքին համաձայն ընտրութիւն լինի աշխարհական պատգամաւորների, որոնք իրաւունք ունին մասնակից լինելու այս նշանաւոր գործում, և առաջն առնելու կանոնից խոտորվելուն, առանց որի, ցաւ է ասել, չէին կատարվում աշխարհական պատգամաւորների նախընթաց ընտրութիւնները, բարեհաճեց նշանակել յետագայ կանոնները:

1) Անդրկովկասեան աշխարհի լուսաւորչական Հայերի իւրաքանչիւր թեմի վիճակաւորը, Էջմիածնի Սինօդից տեղեկութիւն ստանալուց յետոյ կաթողիկոսի ընտրութեան մասին, պէտքէ այդ բանի համար տեղեկութիւն տայ իւր վիճակում գուբերնիայի նաչալնիկին, կարգադրութիւն անելու համար իւր վիճակից մի աշխարհական պատգամաւոր ընտրելու մասին, որը ընդհանուր Հայերի կաթողիկոսի ընտրութեանը մասնակից պէտքէ լինի :

2) Վիճակաւոր առաջնորդները իւր ծանուցման մէջ վիճակների այն բաժանման վերայ հիմնվելով, որ նշանակված է լուսաւորչական Հայերի հոգևոր գործերի կառավարութեան կանոնների մէջ (Հ. XI. մ. 1. չորրորդ գլուխ, 962, 963, 964 և 965 յօդվածներ) պէտքէ ցոյց տան այն ուեզդները և ուչաստկները, որոնց մէջ կան հոգևոր կառավարութիւններ և բարեկարգիչներ, և որոնց մէջ լուսաւորչական եկեղեցու անդամները, որոնք այս եկեղեցու հին սովորութեամբ իրաւունք ունին մասնակից լինելու աշխարհական պատգամաւորի ընտրութեան, պարտաւոր են իւրեանց մէջից երեսփոխաններ ընտրել :

3) Գուբերնիայի նաչալնիկը այս տեղեկութիւնը ստանալուց յետոյ վիճակաւոր առաջնորդից, ուեզդնի նաչալնիկների ձեռով յայտնում է լուսաւորչական եկեղեցու նշանակված անդամներին այն տեղերի բնակիչներից, որոնք հոգևոր կառավարութեան են ստորադրվում, կամ անմիջապէս վիճակի բարեկարգիչներից կախումն ունին, որ նոքա նշանակված ժամանակին ընտրեն երկու երեսփոխաններ, որոնք նշանակված ժամանակում պէտքէ գան այն վիճակի գլխաւոր քաղաքում, որ վիճակին իւրեանք են պատկանում և այն քաղաքի երեսփոխանների հետ միասին մի պատգամաւոր ընտրեն այն վիճակից:

Ծանօթութիւն : Թէպէտ Քութաիսի բարեկարգչութիւնը վիճակաւորի իշխանութեան տակ չէ անմիջապէս, բայց որովհետև լուսաւորչական — հայկական եկեղեցիները Իմերէթում և Գուրիայում Վրաստանի վիճակի մի մաս են կազմում, ուստի Քութաիսի բարեկարգչութեան բնակիչներից նոյնպէս երկու երեսփոխաններ պիտի լինին :

4) Երեսփոխանները կարող են լինել թէ տեղական ընտրող բնակիչներից և թէ առաջնորդանիստ քաղաքի այն բնակիչներից, որոնք իրաւունք ունին ընտրութեանը մասնակից լինելու: Տեղական բնակիչներից ընտրված երեսփոխանները եթէ մի պատ-

ճարով չեն կարող գնալ առաջնորդանիստ քաղաքը, կարող են իւրեանց ձայնը նորան տան, ում հաւատում են իւրեանք:

5) Որ և յէ վիճակի գլխաւոր քաղաքի երեսփոխաններ ընտրելու համար, իւրաքանչիւր վիճակաւոր առաջնորդը, գուբերնիայի նաչալնիկի հետ համաձայնվելով, գրով յայտնում է այն քաղաքի աւագ քահանաներին, ուր ինքն է բնակվում, որ նոքա առաջիկա կիւրակէ օրը հրաւիրեն եկեղեցում բոլոր այն անձներին, որոնք լուսաւորչական եկեղեցու հին սովորութեամբ իրաւունք ունեին աշխարհական պատգամաւորի ընտրութեանը մասնակից լինելու, որ նոքա իւրեանց մէջից երեսփոխաններ ընտրեն, պատգամաւոր ընտրելու համար, որը պէտք է մասնակից լինի բոլոր Հայերի կաթողիկոսի ընտրութեանը:

Այդ երեսփոխանների ընտրութիւնը հետևեալ կերպով պիտի կատարվի:

Ա. Իւրաքանչիւր եկեղեցում այն անձները, որոնք լուսաւորչական—հայկական եկեղեցու հին սովորութեամբ իրաւունք ունեին պատգամաւորի ընտրութեանը մասնակից լինելու, իւրեանց մէջից երեք երեսփոխաններ պիտի ընտրեն:

Բ. Երեսփոխանների ընտրութիւնը կամ եկեղեցու մէջ պիտի լինի, ժամասացութենից ազատ ժամանակում, կամ նոյն եկեղեցու բակում: 8 օրում պիտի վերջանայ ընտրութիւնը, ծանուցման օրից սկսած:

Գ. Երեսփոխանների ընտրութենից յետոյ պէտքէ շինել մի ընտրողական թերթ, ուր պէտքէ նշանակվին ընտրված երեսփոխանների անունները և ազգանունները և ընտրողների ստորագրութիւնները:

Գ. Երեսփոխանների ընտրութեան վերջանալուց յետոյ, աւագ քահանաները այդ ընտրողական թերթերը ներկայացնում են իւրեանց վիճակաւոր առաջնորդներին, որոնք այդ թերթերը ներկայացնում են գուբերնիայի նաչալնիկներին, իսկ որտեղ նոքա չկան, ուեզդի նաչալնիկներին:

6) Գուբերնիայի կամ ուեզդի նաչալնիկի նախասաց համաձայնութեամբ պիտի նշանակվի ժամանակը և տեղը ընտրված երեսփոխանների հաւաքվելու համար վիճակի գլխաւոր քաղաքում:

7) Նշանակված ժամանակում բոլոր ընտրված երեսփոխանները պիտի հաւաքվին նշանակված տեղում վիճակից պատգամաւոր ընտրելու համար: Ժողովը կանոնաւոր կհամարվի, եթէ այնտեղ կգտնվին երեսփոխանների երկու երրորդ մասը, այդ

թուի մէջ համարելով և այն անձներին, որոնք հաւատարմագիր ունին երեսփոխաններից:

8) Երեսփոխանները պիտի առաջարկեն կանդիդատներ պատգամաւորի կոչումն ստանալու համար, քվէարկութեամբ, միայն եթէ ինքն քվէարկվող անձները համաձայն են պատգամաւոր լինելու:

9) Քվէարկութեան աւարտելուց յետոյ, ով ամենաշատ ձայն կունենայ, նա պիտի նշանակվի պատգամաւոր այն վիճակից, ուր կատարվեցաւ ընտրութիւնը, նոցանից յետոյ քվէարկութենից ամենաշատ ձայն ունեցողը կանդիդատ է նշանակվում, պատգամաւորի տեղը ստանալու համար, եթէ նա հիւանդանայ կամ մեռնէ:

10) Երեսփոխանների ժողովի մէջ պատգամաւորի ընտրութեան ժամանակ, կարգը պահպանելու համար, ներկա պիտի գտնվի կառավարութենից նշանակված աստիճանաւոր:

11) Բոլոր վիճակներից ընտրված աշխարհական պատգամաւորները պիտի նշանակված ժամանակին գան Էջմիածին, բոլոր Հայերի կաթողիկոսի և պատրիարքի ընտրութեանը մասնակից լինելու:

12) Այդ պատգամաւորները, եթէ կաթողիկոս ընտրելու համար նշանակված ժամանակին, չկարողանան Էջմիածնում գտնվել, օրէնքով իրաւունք ունին գրով յայտնել իւրեանց կարծիքը, Էջմիածին հասցնելով իւրեանց միտքը:

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ:

—— Բոլորովին ցաւումենք, որ հարկադրված ենք այսպէս ուշ ուղղել մեր սխալը, որ արել էինք մենք օրագրիս 9 №-ի մէջ, եր. 359, և որը կարող չէինք մեզ ներել, ոչ թէ սխալի մեծութեամբ, այլ այն պատճառով, որ սա կարող է նշան լինելու որպէս թէ մենք հարկաւոր ուշադրութեամբ չենք վարվում մեր գործի հետ: Հարկաւոր է ի հարկէ ազնուաբար խոստովանել, որ օրագիրս արդարև երկրորդական ժամերի գործ պիտի լինի մեզ համար, երբ մեր առաջին ժամերը նվիրված են ուսուցչական պաշտօնին-ապրուստի միջոցները գտնելուն. միայն օդով ապրել այս անկարելի է: Բայց և այնպէս կարելի չէր ներել այսպիսի զանցառութիւնը, թէև բոլորովին հաւատացած ենք որ մեր ամեն իմաստուն ընթերցողը նոյնժամայն կհասկանար, որ մեր "արեգակի շուրջ" բառը սխալմամբ է դրված փոխա-

նակ ,,առանցքի շուրջ'' որ երկիրս պտտւում է 24 ժամում իւր ,,առանցքի շուրջ":

Յայտ է նաև, որ ոմանց և այն ամենից Թոյլներին միայն, կարողէր սա առատնութ դառնալ ատամանայցոյց երևելու (տես. պ. Պալ-ցի նամակը Մեղ. Հայաս. լրագրի մէջ): Ինչ և իցէ ուղղում մենք մեր վրիպաութիւնը. ,,արեգակի շուրջ'' բառի տեղ հարկաւոր է կարդալ ,,առանցքի շուրջ,:'

——Մենք ստացանք կառավարութենից մեր սեփական օրագիր հրատարակելու Թոյլտուութիւն ''Հայկական Աշխարհ,, անունով, ինչպէս արդէն յայտնի է մեր ընթերցողներին; վերջապէս կարողացանք այս կամ այն ձանձրալի հոգաբարձութենից ազատ հրատարակութիւն ունենալ և արգելել ոմանց գրականական ձրիակերութիւնը, որքան այս կախված է մեզանից:

—Ընթերցողներս կնկատէին, որ այս տետրակը տպված է նոր տպարանում: Արդարև, ցանկանալով մեր օրագիրը օրինաւոր կերպով և նշանակված ժամանակին հրատարակել, աշխատում էինք մի հնար գտնել պ. Էնֆիաճեանցի և ընկ. տպարանից հանել նորան: Բայց Հայկական Ուսումնարանի տպարանը դեռ ևս շարունակվում է մեռած լինել և հոգացող չկայ նորան կենդանացնելու, ձնայելով մեր բազմաթիւ բողոքներին, մինչ ուրիշ տպարանները, մինչև անգամ և նոքա, որոնք նոր են հիմնվում, մեծ օգուտներ են քաղում իւրեանց գործից: .....

Ինչ և իցէ մեր ցանկութիւնը օրագրիս մասին իրագործելու համար մենք տվեցինք 100 մանէթ մի երիտասարդ վրացի տպարանատէրին, պ. Մելիքովին, որ և բերել տվեց Մոսկվայից քանիմի պուդ տառեր; և ահա մեր գործը բոլորովին ազատվեցաւ պ. Էնֆիաճեանցի ...հոգաբարձութենից: Բայց որովհետև պ. Էնֆիաճեանցը Թոյլ չտվեց, որպէս օրագրի տէր, Կռունկ օրագրի վերջին 3 №№ նոր տպարանում տպել, մենք բոլորովին լաւ համարեցինք յետ տալ նորան այդ օրագրի անունը (մանաւանդ որ բոլորովին սիրելի չէր դա մեզ, և կամեցել էինք նորան փոխել, բայց չաջողվեցաւ, որովհետև Կռունկը Թռչչունների մէջ յիմարների նշան է), և յուսալով ընթերցողներիս ներողամտութեան վերա, համարձակվեցանք յիշված պատճառով մնացած երեք №№ ներկայացնել նոցա մեր խմբագրված օրագրի համար պատրաստված յօդվածների ժողովածու:

—Որովհետև դեռ ևս մենք չենք ստացել բոլոր մեր ստորագրողներից անցած տարվան օրագրիս գինը, և չգիտենք—Թէ

նոցանից որոնք կկամենան վճարել, ուստի այս անգամ չենք տպում օրագրիս մուտքի և ծախսի գումարը։ Մենք յոյս ունինք, որ մեր ստորագրողները չեն կամենայ մեզ պարտքի տակ թողնել և կշտապեն ուղարկել փողը, որ կարողանանք յետագա տետրա-կում ընթերցողներիս ներկայացնել թէ օրագիրս որքան գումար է բերել և որքան է մսխել նորա վերա։

——Մենք համբերութիւնունեցանք կարդալ Մեղ. Հայաս. լրագրի մէջ դիպլոմատութեան անարժան գործը-դէպի մեզ ուղղված նամակը այն անձների մինի կողմից, որի հիւանդ անձնասիրութիւնը գրգռել էինք այս անգամ հրապարա-կաւոր մեր ընդդէմ, խօսելով նորա իբր ուսուցչութեան կամ իբր գրականական աշխատութիւնների մասին։

Մեզ բոլորովին անյարմար է, մանաւանդ մեր արժանաւորու-թենից ստոր ենք համարում յիշված նամակը որ և իցէ պատասխանին արժանացնել։ Ամենաստան արհամարհանք թող լինի բաւական վարձ նամակի հեղինակին մեր կողմից։

Ամեն անձի մէջ կարող են լինել այս կամ այն անյարմարու-թիւններ, կոշտութիւններ, բայց մենք չենք ցանկանում քննել վերոյիշված անձը, խնայելով փոքր ինչ ընթերցողներիս մար-դութեան արժանաւորութիւնը և զգացմունքը . . . .

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ։

,,Նոր տարի և մեր ցանկութիւններ։ Մկրտութեա հանդէս։,,
,,և երգեցողութիւնը։ Եկեղեցական դրան առաջ առու-,,
,,տուրը։ Երեւանից ստացած նամակի լուրերը։ Մոսկվայից,,
,,ստացած լուրերը։ Մոսկվայի հայ ուսանողների թատրօ-,,
,,նական ներկայացումն։ Հայկական թատրօնի հիմնար-,,
,,կութեան յիշատակութիւն։ Թիֆլիսի կլասիկական գի-,,
,,մնազիայի դահլիճում ներկայացմունք։ Ռուս և հայ գիմնա-,,
,,զիստների ներկայացմունք։ Նոր օրագիրներ Թիֆլիսում։ ,,
,,Մեղ. Հայ. այս տարվան առաջին ութ №№ դրվածները։,,

Այս անգամ մեր ներքին գործերի մէջ տեղը չէ ներում աւելի բան ասելու, բայց այնու ամենայնիւ չենք կամենում ընդունված սովորութեան ընդդէմ վարվել և չշնորհաւորել մեր ընթերցող-ներին նոր տարին, մանաւանդ մենք ցանկանումենք ամեն քաղա-քավարութեան պայմանները պահպանել, և եթէ չանէինք այս, գուցէ ոմանք մեզ անքաղաքավարութեան տեղ համարէին։ Ուրեմն, պատուելի ընթերցողներ, շնորհաւոր ձեզ նոր տարին, որա հետ ցանկանումենք, որ այս տարի անհամեմատ աւելի աջող լինի մեր գործերի համար քանթէ անցած տարին։ Իսկ գործեր

կլինին այս տարի. պիտի ընտրվի Հայկական Կաթողիկոս, պիտի գլուխ տանք Հայկական Ներսիսեան ուսումնարանի հոգաբարձուներին, պիտի ընտրվին նոր հոգաբարձուները, որ սոքա . . ուսումնարան շինեն, որ այսօր հասել է անկման գրեթէ վերջին աստիճանին։ Տեսնումէք, որ մեծ գործեր կան կատարելու այս տարի, ուրեմն ցանկանումենք, որ այս բոլոր գործերն տվվի աջող, կանոնաւոր և բարի կատարումն . . . .

Սորա հետ շնորհաւորումենք մեր Փրկչի Ծնունդը և Մկրտութիւնը։ Մկրտութիւնը կատարվեցաւ իհարկէ ընդունված սովորութեան համեմատ փառահեղութեամբ։ Կուր գետի վերա շինված էր յորդանան և վանքի եկեղեցուց պատարագից յետոյ այստեղ ուղևորվեցաւ եկեղեցական խումբը ժողովուրդի հետ։ Բայց ասես թէ ինչ երգեցողութիւն էր այդ օր եկեղեցում, կարծես հրեշտակները վայր էին եկել և քաղցրացնումէին մեր ականջներին Փրկչի մկրտութեան ամենաքաղցր երգերը։ Բայց չէ, շտապումեմ խօսքս յետ առնել և ասել, որ այս խօսքերը երևակայութեանս պտուղ են . . . . . . Մի օրինաւոր տիրացու էր եկել ժամանակ ինչ առաջ, որ կարող էր զարդարել վանքը, որին պիտի պահէին այստեղ (նորա մասին խօսել եմ նախընթաց №-ի մէջ), բայց նորան ևս ճանապարհ գցեցին։

Գանգատներ ենք լսում, որպէս թէ մենք միայն վանքի եկեղեցու ժամասացութիւն ենք քննում միշտ։ Խօսք եմ տալիս գնալ և ուրիշ եկեղեցիներ, լսել ժամասացութիւնը և այցելութեանս հետևանքը հաղորդել ընթերցողներիս։ Լսումեմ, որ Մողնու եկեղեցում ամենալաւ ժամասացութիւն է լինում, եկեղեցու աւագերէց քահանայի Տէր Գասպար Դաւթեանի շնորհով։ Շնորհակալութիւն ուրեմն արժանապատիւ հօր։

Թիֆլիսում մօտ 30,000 Հայեր կան, ինչպէս յայտնված կայ նախընթաց №-ի Մանրալուրերի մէջ (եր.382). 15,262 այր մարդիկ, 13,136 կանայք։ Բայց թող Թիֆլիսցի ընթերցողը մտաբերէ թէ սոցանից ոչքան էին եկել Փրկչի սուրբ խորհուրդին ներկա լինելու։.... Բայց և քահանաները պակաս էին անցած տարուց։ Ինչի՞ ? Սորա հետ մի ուրախական գործ տեսանք այն օր։ Յորդանանից վերադառնալով մեծ խորհուրդի աղօթքի վերջը կատարվեցաւ եկեղեցուց դուրս, բակի մէջ։ Այս գործը մեզ ուրախացրեց, որովհետև բոլոր ժողովուրդին անկարելի էր եկեղեցի մտնել և տեղաւորվել։ Երանի թէ սովորութիւն դառնայ որ ամեն հանդիսաւոր ժամասացութիւնը կատարվի հրա-

պարակում եկեղեցուց դուրս, որ կարողանան ժամասացութեանը ներկայ լինել ամեն ցանկացողները։ Մենք իմացանք, որ երբ Ռուսաստանի հանգուցած ժառանգը հիւանդ էր և բոլոր ժողովուրդը ցանկացել էր միաձայն աղօթք մատուցանել Աստուծուն նորա փրկութեան համար, Մոսկվայի միտրոպօլիտը թոյլ էր տւել Հրապարակում եկեղեցուց դուրս պաշտօն կատարել։

Չենք մոռանում մի ուրախ գործ, որին ականատես էինք յունվարի 6 ին, վանքի բակում։ Որ մոմի համար ամենքեան փող տան, մոմի սեղանը դուրս էին բերել բակի մեծ դրան առաջ և ամեն եկողին մոմ էին յանձնում . . . . Չէ որ այս իրողութիւնը շատ համաձայն է քրիստոնէութեան ոգուն? Տուն իմ տուն աղօթից կոչեսցի,, ասաց Յիսուս Երուսաղէմի տաճարի դրան նստող մենավաճառներին։ Յոյս ունինք միւս անգամ թոյլ տալու չէ Թիֆլիսի սրբազան առաջնորդը այդպիսի անվայել վաճառականութիւն եկեղեցու դրան առաջ . . . . Լսում ենք, որ մեր սրբազան առաջնորդը կամենում է մի գեղեցիկ գործ ձեռնարկել Թիֆլիսի ամեն եկեղեցիներում օրինաւոր երգեցողներ ունենալու։ Միջոցներ կան, ուրեմն մեր հոգու ամենզօրութեամբ ցանկանում ենք աջողութիւն Նորին Սրբազնութեան։

Այս անգամ մեր տարեգրութիւնը վերջացնելուց առաջ հաղորդում ենք քանի մի տեղեկութիւններ այլաքաղաքացի Հայերի մասին։ Երևանից ստացած նամակից առաջարկում ենք հետևեալը։ ,,Գիտենալով, որ դուք ճշմարտութիւնը կսիրէք, ահա ձեզ հաղորդում եմ և հետևեալ տեղեկութիւնը, որը յոյս ունիմ ծածկելու չէք ընթերցող հասարակութեան իմացութենից։ Մեղ. Հայաս. լրագրի 1865 թւի դեկտեմ. թերթերի մէջ պ. Կամսարական աշտարակցու ստորագրութեամբ մի յօդված կար, որի մէջ իբրև թէ պ. Գռօշի օգնութեամբ ուսումնարան է բացվել Աշտարակում, երկու նոր ուսուցիչներ են եկել, և այլն և այլն։ . . . . Այդ յօդվածի բովանդակութիւնը սուտ է։ Աշտարակի ուսումնարանը կրկին հին սովորութեամբ մի տիրացուի իշխանութեան տակն է։ Այդ յօդվածի նպատակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ, պ. Գռօշեանը (այժմ հանգուցեալ) Ստեփանոս եպիսկոպոսին բարձրացնել է կամեցել (?) ,,։Ներկայացնելով այս խօսքերը, մենք ոչինչ չենք կարող աւելացնել, բացի հարցական նշանից, որ և նշանակեցինք իւր տեղը։ Մեր ուշադիր ընթերցողը կիմանայ այս գործի հետ արժանապէս վարվել։ Մեր կողմից կասենք, որ պ. Սխոնեանցին — Մեղ. Հայաս. լրագրի

խմբագրողին չենք կարող մեղադրել այս գործում: Նորան այսպէս է հաղորդել նամակագիրը:

Մոսկվայից ստացած նամակից առաջարկում ենք ընթերցողներիս հետևեալը: „Շնորհաւորում եմ նոր տարի նոր կեանք և աջողութիւն օրագրիդ—խնդրում եմ Աստուծուց, որ տայ ձեզ կարողութիւն շարունակել գործդ մի և նոյն եռանդով, ինչպէս սկսեցիք և չար լեզուները չկարողանան ձեզ խանգարել և թուլացնել ազգային պատուական գործիցդ . . . . Օրագրիդ համարները շատ անկանոն են դուրս գալիս, պէտքէ խոստովանած, և դուք կարծեմ, համաձայն կլինիք ինձ հետ: Բայց դուք մեղաւոր չէք, ինչպէս երևում է ձեր յայտարարութենից օրագրիդ վերջին համարի մէջ: Այսուհետև իհարկէ այսպէս չի լինի: (Բոլորովին համաձայն ենք մեր ազնիւ և անկեղծ բարեկամի խօսքին): . . . . "Ահա ձեզ լուր ուրախալի. մեր հայ ուսանողների ժողովը կայ այնպէս մինչև ցայժմ, ինչպէս եղել է: Ժողովի տան մէջ բնակւում է մի հայ տղայ, որ պատրաստւում է համալսարան մտնելու և ստանում է ամսական 25 մանէթ ժողովից: Յունվարի 9-ին ուսանողներս թատրոն ներկայացրինք պ. Սեկրետարեովի պատուական շինած թատրոնի մէջ (Մեծ Կիսլովկա փողոցում): Այս ներկայացումից ժողոված գումարը նշանակված է յիշված երիտասարդի և միւս չքաւոր ուսանողների համար, որոնց և բաժանեցինք, թողնելով առաջնի համար հարկաւոր գումարը: Ներկայացման պիեսներն էին. 1) Հին և Նոր, կոմեդիա երեք արարողութեամբ պ. Գ. Երիցփոխեանի աշխատութիւն, 2) Անփողութիւն, (Безденежье) ուսանողական կեանքից առած վօդևիլ, երկու արարողութեամբ պ. Յարութիւն Միրիմանեանի աշխատութիւն:

Գ. Երիցփոխեանի կոմեդիայի նիւթը առած է Թիֆլիսցիների կեանքից և գործողութիւնը կատարվում է Թիֆլիսի մէջ:

Ահա այս կոմեդիայի գլխաւոր միտքը. պանսիօնում աւարտած աղջկան հայրը և մայրը կամենում են տալ կին սորան մի կոպիտ վաճառականին, թէև Հայկական Ուսումնարանում աւարտած է: Աղջիկը չէ կամենում գնալ սորան կին, այլ ցանկանում է, որ պսակվի Մոսկվայի համալսարանում աւարտած տղայի հետ: Բայց հայրը և մայրը բռնադատում են սորան և նշանում են սեմինարիստի հետ, բայց յետոյ կրկին փոխում են միտքը իւրեանց բարեկամի առաջարկութեամբ և նշանում են աղջկան սիրած տղայի հետ:

Շատ գեղեցիկ էին խաղում պ. Ալադաթեանը Հօր դերը, պ. Տուլայեան-մօրը, և պ. Մուլթանեանը—Մոսկվայի Համալսարանում աւարտած տղայի դերը: Պ. Մերկմանեանը շատ լաւ էր ներկայացնում կոպիտ վաճառական սեմինարիստ: Պ. Մերկմանեանի վօդևիլի համար ինչ գրեմ, արդէն յայտնի է ձեզ ուսանողի կեանքը, երբ գրպանում մկներ են խաղում: Միայն այն կասեմ, որ երկրորդ գործողութեան մէջ, երբ ուսանողներն գալիս են վաճառականի մօտ փող փոխառնելու, այս տեսարանից առաջ հեղինակը նկարագրում է վաճառականների կեանքը և ուղղութիւնը: (Երկու Թիֆլիսցի վաճառականներ և մինը Շամախեցի, որ սիրում է ուսանողներին, բայց նոքա միշտ ծիծաղում են նոցա վերա, ինչպէս անբախտաբար մեր վաճառականների սովորութիւնն է: Բայց Շամախեցին ևս որքան միայն կարելի է ասում է նոցա պակասութիւններն և ամաչեցնում): Այս Շամախեցի վաճառականի դերը կատարեց ինքն հեղինակը: Երկու Թիֆլիսցի վաճառականների դերերը—մինը կատարում էր պ. Ալադաթեանը, միւսը պ. Տուլայեանը: Ուսանողներն էին մինը. պ. Քիշմիշեանը, միւսը պ. Գրիգորեանը: Մի քանի օրից յետոյ լսում ենք, որ Թիֆլիսցի վաճառականներն անբաւական են մնացել վօդևիլի հեղինակից: Բայց այս բանը իհարկէ պիտի շատ ուրախացնէ հեղինակին, ըստ որում երևում է նոքա զգացել են իւրեանց պակասութիւնները, որ կարծում են թէ միշտ կմնան ծածկված: Եւ այս արդէն ապացոյց է թէ որքան ճիշտ է նկարագրել նոցա հեղինակը:

Գալոց տարվան օրագիրը նմանապէս ուղարկեցէք ինձ խնդրում եմ. փողը կուղարկեմ ձեզ, կամ աւելի լաւ ևս կբերեմ եղբօրս և այդտեղ կստանաք,,:

Բոլորովին ուրախ ենք և շնորհակալ այս տեղեկութիւնների համար: Հարկաւոր է խոստովանել, որ Մոսկվայի ուսանողները դերասանացվելեն միշտ բարեգործական գործով: Շնորհաւորում ենք Մոսկվայի համալսարանի ուսանողներին, որ նոքա շարունակում են հայ ուսանողական անունը բարեգործութենից անբաժան պահպանել: Հայկական թատրոնի հիմնարկութեան փառքը Մոսկվայում պատկանում է նոյնպէս Մոսկվայի համալսարանի ուսանողներին, երբ նոքա առաջին անգամ ներկայացրին հայկական թատրոնը 1858 թուին: Այն ժամանակվան ուսանողների—Ալադաթեանի, Գուլդենբերգեանի, Քամանեանի և ուրիշների ազգանունները կապված են հայկական թա–

տրոնի հիմնարկութեան հետ, մոսկվայաբնակ յարգելի Հայի, պ. Միքայէլ Ստեփանեանի տան մէջ: Եւ Մոսկվայի ուսանողները յիշեցնումեն երբեմնապէս այս փառաւոր գործը մոսկվայաբնակ Հայերին մեծապէս ուրախացնելով և պարտաւորելով իւրեանց ներկայացմամբ:

Սպասումենք պ. Մ/րլ.մանեանի փողեկը, որ գիտակից անենք օրագրիս ընթերցողներին ուսանողական կեանքին:

Հայկական թատրոնական ներկայացմունքի վերա խօսելով ի դէպ է ասել մի խօսք և Թիֆլիսի գիմնազիայի մէջ եղած ներկայացմունքի մասին:

Անցած տարվան նման այս տարի ևս Թիֆլիսի կլասիկական գիմնազիայի դահլիճում թատրոնական սցենա էր շինված, և շինել էին Թիֆլիսի բարեգործական ընկերութեան անդամները: Սոքա երկու անգամ ներկայացրին ի հարկէ ռուսական պիէսներ յօգուտ Թիֆլիսի ժողովրդական ուսումնարանների: Թիֆլիսի հասարակութիւնը կարող էր ցաւել, որ այս տարի ներկայացմանը մասնակից չէին Զինուորական Ուսումնարանի տեսուչը պ. Դոնիսինկօն, և նոյն Ուսումնարանի ուսուցիչը պ. Բօգդեվիչը, որոնք անցած տարի կատարեալ զվարճութիւն տվեցին մեզ իւրեանց ճարտարապետական խաղարկութեամբ: Այսպէս ուրեմն սցենան կար, և այս հանգամանքից գիմնազիայի աշակերտները թէ Ռուսեր և թէ Հայեր կամեցել էին օգուտ քաղել, և պատրաստվեցան բարեկենդանին թատրոն խաղալու: Թէ ռուսական և թէ հայկական ներկայացման գլխաւոր գործը ''Կախարդված Պրինց,, անունով թարգմանական պիէսն էր: Իհարկէ լաւ կլինէր եթէ պիէսի հայկական թարգմանութիւնը աւելի մշակված և կանոնաւորված էր եղել, թէև թարգմանութիւնը բաւական տանելի էր: Ռուս գիմնազիստների ներկայացման մենք չկարողացանք ներկա գտնվել թէև կամենումէինք; հայ աշակերտների ներկայացումն տեսանք: Գործի բոլոր հանգամանքները քննելով, հարկաւոր է ասել, որ մեր երիտասարդները կարողացել են քանի մի արգելառիթ հանգամանքները հեռացնել և այնպէս բաւական զվարճութիւն տալ իւրեանց ծնողներին և ազգակիցներին իւր ներկայացմամբ: Շնորհակալ ենք մեր սիրելի գիմնազիստներից այդ բարի և գովելի ցանկութեան համար: Գիմնազիստների երկուքեան—ռուսական և հայկական—ներկայացմունքին ներկա գտնվողի վկայութեան համեմատ, կարող ենք ասել, որ խաղարկութիւնը հայ գիմնազիստներին աւելի է

աջողվել: Թող ուրեմն յուսանք, որ մեր սովորող երիտասարդները փախչելու չեն երբէք ոչինչ օգտաւէտ և ազնիւ աշխատանքից և գործից—ուսումից:

Ասենք միքանիմեր խօսք այս տարի հրատարակվելու նոր օրագիրների մասին: Մարտ ամսից պիտի հրատարակվի Թիֆլիսում վրացերէն գրականական և քաղաքական լրագիր "Ժամանակ,, անունով, շաբաթ միանգամ: Տարեկան գինն է Թիֆլիսում 5 մանէթ առանց հասուցման, Թիֆլիսում հասուցմամբ և ուրիշ քաղաքներ ուղարկելով 6 մանէթ: Խմբագրութեան կանտօրը գտնվում է Մելիքովի և ընկ. տպարանում: Այսքան միայն կասենք, որ խմբագրողը պ. Ծերեթելին և լրագրի առաջին աշխատակիցները համալսարանում եղած ուսանողներ են, ուստի կարողենք նոցանից օրինաւոր գործ սպասել, որ և հոգով ցանկանումենք, հրատարակողը ինքն տպարանատէր պ. Մելիքովն է: Բացի վրացերէն լրագրից 1866 Թւին կամենումեն հրատարակել Թիֆլիսում հայկական երկու նոր օրագիրներ մին շաբաթական և միւսն ամսական: Մենք բոլորովին անտեղի ենք համարում առաջուց ուրախանալ, մինչ ոչինչ չենք տեսել բացի յայտարարութենից:.. պէտքէ ասել, որ մեր մէջ օրագրի հրատարակելը դարձել է արդէն երեխայական խաղ: Մեր կարծիքով օրագրի խմբագրողը պիտի լինի անշուշտ լուսաւորված, խմաստութեամբ զարգացած և խիստ բարոյականութեամբ բոլորովին կրթված մարդ: Նա պիտի տարածէ ազգի մէջ լուսաւոր, ճշմարիտ, ազնիւ մտքեր, և այս մտքերը նորա մէջ խորին հաստատութեամբ և արդարութեամբ արմատացած պիտի լինին, որ դոցա հաստատութիւնը ներգործէր ընթերցողների վերա և օրագիրը կարդալու ժամանակ ընթերցողը ըզգար, որ նա հաստատ և ճշմարիտ հիմի վերա է կանգնած: Թիֆլիսի նոր օրագրագրողների մասին մենք ոչինչ չենք կարող ասել; հոգով ցանկանումենք, որ նոքա անհամեմատ աւելի լուսաւոր, ազնիւ և ճշմարիտ մտքերի թարգման լինին քան թէ մենք կարող ենք սպասել նոցանից: Նոցանից մինը տէր Ստեփան քահանա Մանդինեանցն է, որը յոյս ունինք յայտնի է հայկական հասարակութեան և Թիֆլիսցիներին, մանաւանդ սորա յայտարարութիւնը դէպի լուսաքարոզ Հիւսիսափայլ օրագիրը: Նորա յայտարարութեան մէջ մենք չիմացանք, թէ ինչ օրագիր է կամենում հրատարակել, կրօնական թէ քաղաքական թէ գրականական թէ ֆէլիէտօնական թէ մանկավարժական թէ կրիտիկական, և այլն և այլն: Առաջին բաժինը, քարոզներ, եկեղեցական

պատմութիւն և այսպիսի կրօնական գրուածներ պիտի կազմեն։ Երկրորդ բաժինը ռօմաններ, վիպասանութիւններ, դրամաներ, և այլն։ Երկու հայր Մանդինեանցը շատ մօտ յարաբերութիւն է գտնում այս երկու բաժինների մէջ։ Յետոյ կայ կրիտիկա, կայ և ֆէյլէտօն (?), կայ նաև,, պեդագոգիկական (ուսումնական),, մասը։ Մենք բոլորովին չենք զարմանում, որ քահանա Մանդինեանցը կամենում է պեդագոգիկական յօդուածներ տալ, բայց համարձակվումենք նորան յիշեցնել, որ այն մեկնութիւնը, որ դրել է նա փակագծում, պարզ չէ բոլորովին; համարձակվումենք յայտնել արժանապատիւ հօր, որ պեդագոգիկական բառը չէ նշանակում "ուսումնական,, այլ "մանկավարժական,,։ Նա յունական բառ է "παις" (պէս)-մանուկ և ,,αγο (ագօ)-վարել, կրթել։ Բայց հայր Մանդինեանցը յայտնում է, որ նա կամենում է "լուսաւորութիւն,, տարածել մեր մէջ և այսպիսի լայնատարած խնդրի մէջ իհարկ է ով է հարցնում թէ պեդագոգիկական բառը ինչ է նշանակում։ Եւրոպական բառ է էլի։ Մի խօսքով "լուսաւորութիւն,,է։

Միւս լրագիրը տալու կամեցողի մասին մենք ոչինչ չենք կամենում ասել . . . . Յայտարարութեանը նայելով նա ևս ամեն բան պիտի տայ, թէև նա կամենում է գլխաւորապէս վաճառականներին լուսաւորել. . . . Մեղ նորա հաշիւը շատ նուրբ չէ երևում։ . . . . . Ուրիշ շատ բաների հետ (չմոռանաք, որ դա կամենում է "ուսումնարանների և կրթութեան նոր ուղղութիւնն,, նոյնպէս հաղորդել մեզ, բրաւօ!) դա ասում է և լեզուի մասին, թէ լեզուն "էլէլ է,, (այսինքն եղել է), և թէ ոչինչ չպիտի ստեղծվի և հնարվի։ Ցաւալի է, որ հրապարակապէս ասված այս խօսքի մէջ բոլորովին չկայ ոչինչ անկեղծութիւն և ճշմարտութիւն։ Ժամանակ ինչ առաջ մենք բաւական ժամեր ենք կորցրել յիշված անձին համոզելու թէ "վ,, -ի տեղ "ու,, գրելը անտեղի է և անյարմար, նաև բայերի մէջ։ Այժմ ձևը մեր օրագիրը ստեղծեց և սկսեց գործածել։ Ասելով, որ լեզուի մէջ ոչինչ չպիտի "ստեղծվի և հնարվի,, պարոնս չէ գրում "ստեղծուի, հնարուի,,այլ" ստեղծվի և հնարվի,, մեր օրագրի ստեղծված և հնարված ձևով։ Այո այս գործը ճշմարտութեան և անկեղծութեան ընդդէմ է և մի ձեռնարկութեան սկզբում անյարմար։ Այս ևս մի հնարագիտութիւն է, որ մենք գիտենք ներել և շատ նուրբ չէ հնարը . . . . . Իհարկէ հարկաւոր չէ որ անշուշտ ասեն թէ ահա այս կամ այն ձևը

սա ստեղծից և միւսն ընդունից. մենք ցանկանումենք միայն, որ իմաստութեամբ կանոնաւորված նոր ձևերը ընդունվէին մեր մէջ: Այսպէս խօսելով մենք մեր պարտականութիւնը կատարեցինք, բոլորովին չցանկանալով ոչ ոքին վիրաւորել և մեր ընդդէմ գրգռել: Այսուհետև թող իւրեանց ստորագրողները լինին դատաւոր: Եւ որովհետև ոչ հայր Մանդինեանցը, ոչ պ. Տ. Աղէքսանդրեանցը չբաւականացան մի շաբաթական լրագրով և մի ամսական օրագրով, որոնք կային Թիֆլիսում և որոնց խմբագրողները գոնէ փոքր ինչ ուսումն ստացած կան եւրոպական գիտութենից և աշխատել են իւրեանց միտքը զարգացնել գիտութեամբ, այլ նոր հրատարակութիւններ ձեռնարկեցին, բաւական թուղթ սևացնելու, տեսնենք—ինչպէս կհաղորդեն դոքա այն բոլորը, ինչ որ գրելեն իւրեանց յայտարարութիւնների մէջ, և Աստուած տայ, որ կարողանան, և խոստանումենք անկեղծաբար այս աջողապէս կատարված հրաշագործութեան առաջին գնահատողներից լինել:

Բայց ասես թէ լեզուն ինչ հիմնալի է: "Էս լեզուն էլել է, էլել է ժողովրդի բերնումը,, բացագանչումէ նոր "գալէթ,, գրողը: Շնորհաւորումենք դորան այդ "էլած,, լեզուն: Եթէ կամենումէին տեղացի ժողովրդի լեզւով գրել, ապա Թիֆլիսցին կասէր. "էս լեզուն էլէլէ խալխի բերնումը,,: Գրականական լեզւով հարկաւոր էր ասել. "այս լեզուն եղել է ժողովուրդի բերանում,,: Բայց ինչին է պէտք պ. Տ. Աղէքսանդրեանցին իմանալ թէ ինչ է և որն է գրականական լեզու և որն գաւառական: Նա իմանումէ միայն, որ սա "էլած,, լեզու է և այդ "էլած,, լեզւով նա պիտի մեր վաճառականութիւնը լուսաւորէ, մեր օրագիրներին և լրագիրներին միտք և կեանք հաղորդէ, նոցա պակասութիւնները ցոյց տալով "կրիտիկա,, գրելով, և այլն և այլն: Մի խօսքով մեծ բաներ պիտի անէ: Բրաւօ, պ. Տ. Աղէքսանդրեանց: Որքան աւելի համարձակ կտանէք ձեր գործը, այնքան աւելի աջողութիւն կունենաք ամբոխի մէջ, իհարկէ երբէք չպիտի մոռանաք ասել, թէ "ժողովրդի բերնումը կայ սիրուն լեզու, ժողովուրդը ամենից լաւ է մտածում, ժողովուրդը ամեն բան գիտէ, և դուք նորան նոյնպէս ամեն բան կսովորեցնէք,,, և այլն: Եթէ նորա ընթերցողները "Եւրոպայի, Ամերիկայի, Ասիայի առուտուրի վիճակն եւս չեն իմանայ նորա թերթերից, կարողեն այս լեզւի քաղցրութեամբ եւս բաւականալ: Բայց բոլորովին աւելորդ է, մանաւանդ անյարմար ենք

համարում այսպիսի գրողների հետ որևիցէ լեզուի մասին խօսք ու զրոյց անել առ հասարակ; փոյթ չէ որ "գաղէթ" գրողը ասումէ թէ նորա գլխաւոր առարկաներից մին պիտի լինի հայկական լեզուն: Ում յայտնի չէ, որ մի տեսակ մարդիկ ցանկանումեն աւելի խօսել այն բաների վերա, որ նոքա ամենից պակաս գիտեն . . . . Տեսնենք—կարելի է հայկական ընթերցողներին ևս իսկ սոքա են հարկաւոր: . . . . Յաւել կարողենք. նախանձելով,—հաւատացէք, չենք նախանձի . . . . . .
Վերջացնենք մեր երկարացած խօսքը այս տարուան Մեղ. Հայաս. լրագրի կին №№ մէջ տպված գրվածներով: Անցած տարուան վերջին և այս տարուան առաջին №№ մէջ տպված էր Հայկական Ներսիսեան Ուսումնարանի կանոնադրութիւնը: Ասենք ի դէպ, որ կանոնադրութիւնը ոչինչ չէ նշանակում, եթէ չկան կատարողներ . . . . . . 3 և 4 №№ մէջ կան շամախեցի Հայերի սովորութիւնները; 3 №ի մէջ կայ նոյնպէս պ. Եւանգուլեանի քանի մի խօսք Հայկ. Գրակ. պատմ. անունով գրքի վերա: 5 №ի մէջ կայ ուսանող Ա. Արծրունու հաշիւը Պետերբուրգի չքաւոր ուսանողներին օգնող Հայերի տված գումարի մասին: Պ. Արծրունին հրաւիրումէ սիրող Հայերին մասնակից լինել այդ բարի գործին: Նոյնպիսի հրաւէրը անումէ Մոսկվայի ուսանողը Փ. Վարդանեանը իւր չքաւոր ընկերների համար (№ 8): Մեր օրագիրը միացնումէ իւր ձայնը ուսանողների հրաւէրին և խնդրումէ սիրող Հայերին օգնել հայկական երիտասարդներին մի բարի և փրկաբար գործ կատարելում: Ամեն մի մանէթը շնորհակալութեամբ պիտի ընդունվի այդ բարերարական գանձանակի մէջ: Նոյն 5 №ի մէջ կան մի քանի խօսք Ներսէս V-ի ուսումնասիրութեան և այն պատւի վերա, որ ունէր նա դէպի ուսումնականները, և Ներսիսեան ուսումնարանի հիմնարկութեան վերա:

Այս տարի հրատարակվելու հայկական նոր օրագիրների մասին մենք կարդացինք 5 №ի մէջ յետագա հեգնաբար ասված խօսքերը." . . . . Երկուսն էլ ծանր, բայց ախորժելի գործ ունեն կատարելու ազգի համար, որովհետև մէկը գարուն պիտի բերէ ազգի մտաւոր և բարոյական անդաստանի համար, սրան հոտաւէտ ծաղիկներով և բարեբերութեամբ զարդարելով, անդաստանի, որն որ այսքան տարիներ չոր և ցամաք է եղել, միշտ երաշտութեան և ձմեռնային սառնամանեաց ենթակայ լինելովը, իսկ միւսը մեր ազգայիններին պիտի հասկացնէ վաճառականութեան օգուտը, սորա ուղիղ կատարումն, կանոնաւոր

ընթացքը, ծանօթացնելով մեր վաճառականներուն այն առևտրական ձևերի և միջոցների հետ, որոնք տիրապետումեն Եւրոպայի և Ամերիկայի լուսաւոր երկիրներումը, ծանօթացնելով նրանց այն երևելի քաղաքագէտ անձանց ունեցած կարծիքների հետ առևտուրի վերա, որոնք նորանով իրանց տէրութիւններին մեծ օգուտ տուին և իրանց ազգակիցներին մեծ նիւթական շահ, վաճառականութիւնը կանոնի և ուղղութեան տակ գցելով:,,
7 №ի մէջ կան ,,Երկու խօսք բարոյական կեանքի վերա,, և Լոնդոնի նկարագրութիւնը (Թարգմ. լեզուն շատ ծանր է): 8 և վերջին 9 №№ մէջ կարդացինք դոկտոր Մ. Շահ—Պարոնեանի նշանաւոր յօդուածը ,,Խօլերայի պատճառների և նորանից զգուշանալու միջոցների վերա,, որ և խորհուրդ ենք տալիս կարդալ ամենեցուն, ով կարող է ձեռք բերել նորան: Շնորհակալ ենք մեծապատիւ դոկտոր Շահ—Պարոնեանից, որ մեր բժիշկներից նա առաջինը ձայն տուեց ժողովուրդին այդ հետաքրքիր և միևնոյն ժամանակ վտանգաւոր խնդրի մասին:

Le merite est modeste (արժանաւորութիւնը համեստ է) ասումէ Ֆրանսիական առածը: Համարձակվումենք ասել, որ դոկտոր Շահ—Պարոնեանի համեստ յօդուածի մէջ մենք գըտնումենք աւելի հարկաւոր և օգտաւէտ տեղեկութիւններ խօլերայի մասին, քան թէ այն մեծամիտ դասերի մէջ, որ ,,Խօլերայի վերա դասեր,, անունով կարդումէ այժմ Թիֆլիսում հրապարակաբար դոկտոր Բօնչեվսկին: Իդէպ ասենք, որ պ. Բօնչեվսկին հրաւիրելով հասարակութիւնը խօլերայի վերա խօսելու, իւր լսողներին առաջարկումէ իւր սեփական մտքեր և աւելի ընդհանուր խօսքեր այս կամ այն հասարակական կեանքի պայմանների մասին, որոնք ամենևին չեն կարող խօլերային պատկանել : . . . . . .

Աւելորդ չէ կրկնել դոկտոր Շահ—Պարոնեանի խօսքերը, որ ասաց նա իւր յօդուածի վերջում, թէ մեծ օգուտ կբերէին քաղաքացի և գուղացի քահանաները թէ կարդան այս յօդուածը և հաղորդեն ժողովուրդին նորա խրատները, իսկ խրատները բաւական կգտնեն այս յօդուածի մէջ, ափսոս միայն որ լեզուն կանոնաւորված չէ: Կրկնումենք մեր շնորհակալութիւնը յարգելի դոկտորին այդ յօդուածի համար:
8 №ի մէջ կան պատգամաւորներ ընտրելու կանոնները, որ արդէն տպել էինք և մեր օրագրի մէջ:

9 №ի մէջ կայ նոյնպէս ‘‘Խաչ օգնեա ինձ,, ոտանաւորը, Աստղիկ ստորագրութեամբ: Ոտանաւորի միտքը լաւ է, ձեւը նոյնպէս վատ չէ, բայց ձիգ լինելով, ընթերցողին յոգնեցնում է ոտանաւորը: Համարձակվում ենք նկատել պ. Աստղիկին, որ այդպիսի մտքերը, եթէ ոտանաւորով գրվին, պիտի կարճ և ազդու ձեւով լինին:

Այժմ մնացէք բարով, ընթերցող իմ: Կտեսնվինք դարձեալ:

ԹԻՖԼԻՍՑԻ ՀԱՅ:

Յ: Գ: Այս րոպէիս ձեռս ընկաւ ‘‘Վաճառական,, լրագրի 1 №, որ հրատարակվել է մարտի 6-ին: Նորա մէջ երկու յօդված կայ, բայց ոչինչ չկայ այնպիսի, որ կարողանայինք առաջարկել ընթերցողներիս կարդալու: Սկզբում մի քանի խօսք կան ‘‘Եւրոպայի առեւտրի վիճակ,, անունով: Զարմանալի հեշտ է եղել Եւրոպայի առեւտրի վիճակը ստորագրելը . . .

Խեղճ Եւրոպայի առեւտուր: . . . .

Այժմ հաւատում ենք, որ ‘‘Վաճառականը,, կարող է և Ասիայի և Ամերիկայի և Աֆրիկայի առեւտրի վիճակն և նշանակութիւնը նոյնպէս ստորագրել . . . Լրագրի միւս յօդվածը, որ Թիֆլիսի բարբառով է գրված, այս անունն ունի. ‘‘Եկեղեցու բուրջը և Լալօի նահալին,,: Թող ցնծան,, Վաճառականի,, ստորագրողները . . . .

Թ: Հ:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ:

——Շամախի Ս. Տ. Ս. Գ. Ձեր նամակը ստացանք: Ձեր առաջարկութիւնը նամակագրութեան մասին ընդունում ենք ուրախութեամբ. մի խօսք միայն թոյլ կտանք մեզ ասելու ձեր գործածված ոճի մասին, որով դարձել էիք դէպի մեզ; այն է. դուք գրում էք, որ պ. Կ. . . Շ. . . . . գործը կրիտիկայի տակ է, և հարցնում էք մեզ, գրէ՞ք արդեօք, կամ եթէ սա մեր բարեկամ է, լռէ՞ք‘‘: Օտարոտի երեւցաւ մեզ այդ խօսքը, թոյլ տվեցէք յուսանք, որ այսուհետեւ դուք մեր գրվածները կկարդաք աւելի ուշադրութեամբ և այդպիսի դարձը դէպի մեզ ներելու չէք երբէք ձեզ: Մեր առաջին տետրակի նախայօդվածը, որի մէջ մենք ցոյց տվեցինք, թէ ինչ կնշանակէ խմբագրողութեան խորհուրդը, այն յօդվածը վերջանում է այսպէս. ‘‘Օրհնվի, գովվի, փառաւորվի, թագաւորէ ճշմարտութիւնը, ճշմարտութիւնը, ոչինչ աւելի քան ճշմարտութիւնը

(եր. 20),, Որպէս ամէն մարդ մենք երբէք չենք ների մեզ, որ մեր գործը հակառակէր մեր խօսքին . . . . Մեր վերջին տետրակի նախայօդուածով մենք նորէն յայտնեցինք, թէ ինչպէս ենք հասկանում մենք խմբագրողութիւնը:

Խոստովանում ենք, որ այս տրտում և տխուր հանգամանքում մեր հասարակութիւնը պէտք ամենապակաս մեղաւոր համարելի, թէև ցաւում ենք բոլորովին, որ այսպիսի հարցերը դեռ ևս կարելի են մեր մէջ: Ամէն մարդը կարող է շունչ քաշել միայն այն ժամանակ եթէ հասարակական կեանքը ցոյց է տալիս որ և իցէ առաջադիմութիւն, անումէ որ և իցէ քայլ դէպի առաջ միայն ճշմարտութեան անունով: Մի երևելի Ֆրանսիացի դիպլօմատը ասաց, թէ խօսքը պարգևուած է մարդին այնոր համար, որ նա կարողանայ աւելի յարմար կերպով ծածկել իւր միտքը: Բայց տպագրութեան մէջ, հրապարակական քննութեան մէջ, ուր խօսքերը չեն անյայտանում օդում, ինչպէս ընտանեկան խօսակցութեան ժամանակ, այլ անջնջելի մնում են բոլորի աչքի առաջ, ուր արտայայտուած միտքը կամ յայտնուած կրողութիւնը, կարող է ընկնել իւրաքանչիւրի քննութեան և ստուգութեան տակ, այստեղ կարծես ամէն տեսակ ստախօսութեան վերջ պէտք լինէր: Այս պատճառով հասարակ և անուս մարդիկը ամէն տպուած ինչ ընդունեն ինչպէս անդրդուելի ճշմարտութիւն, և անպայման հաւատումեն այն ամէնին, ինչ լոյս է տեսնում տպագրութեամբ: Բայց Տալէյրանի նկատութիւնը մարդկային խօսքի մասին վերաբերվումէ և տպագրութեան: Ինչպէս խօսքը նոյնպէս և տպագրութիւնը ենթարկվել են ընդհանուր օրէնքին, որին ենթարկվածեն մարդկային բոլոր գործեր: Թէ խօսքը և թէ տպագրութիւնը, որոնք պէտք պարզ ճշմարտութեան գործիք լինեին, զանազան խարեբայութեան զօրաւոր գործիք կարողեն լինել: . . . Մի թէ մեր հասարակութիւնը մինչև այն աստիճան զուրկ է հասկացողութեան սկզբնական պայմաններից, որ կարելի է նորա առաջ ուղղակի սևին սպիտակ ասել և սպիտակին սև? Ոչ, չէ կարելի այդպէս մտածել: Հասարակականութեան արտաքին նշանները դեռ բոլորովին հեռու են հասարակութիւն լինելուց: Գործն այն է, որ տպագրական մամուլը ինքն ըստ ինքեան բառերին դեռ չէ հաղորդում հասարակականութեան զօրութիւն: Նորա համար հարկաւոր են ուրիշ պայմաններ, և ամենից առաջ հարկաւոր է, որ հասարակութիւն լինի, որ

հասարակական գործ լինի, որ մարդիկ իւրեանց կոչումն համարէին հասարակական գործին մասնակից լինելը: Այն մարդիկներին, որոնք իմաստից զուրկ չեն և որոնք պարապումեն դըրականապէս գործով, չէ կարելի խաբել աշխարա անյարմարութիւններով, չէ կարելի նոցա սովրել հաւատալու յայտնի մոտիաբանութեան, չէ կարելի նոցա առաջ սևին սպիտակ և սպիտակին սև ասել, չէ կարելի ծիծաղել նոցա տեսողութեան և լսողութեան վերա, չէ կարելի հայհոյել նոցա առողջ իմաստը: Բայց այն ինչ մարդիկը չեն համարում կամ չեն կարող համարել իւրեանց որպէս կոչումն ունեցող ընդհանուր գործին մասնակից լինելու, այն ժամանակ նոքա իհարկէ չեն կարող և հասարակութիւն կազմել այդ գործի և խօսքի համար:.... Մեր մէջ ամեն երեխան կարողանումէ տպել իւր խակ և անկարգ մաքի ծնունդը; կարծես թէ տպագրութեան հետ կարելի է բոլորովին այնպէս վարվել, ինչպէս երեխան գնդակի հետ է վարվում իւր խաղերի մէջ:

Կրկնումենք—ճշմարտութիւնը է ամենաբարձր էական բարի. նա միայն կարող է տալ մեզ ամենաբարձր էական և ոչ երևակայական բաղդաւորութիւն: Մենք ամենադառն ճշմարտութիւնը համարելու ենք միշտ անհամեմատ աւելի լաւ քան թէ ամենաքաղցր մոլորութիւն: Գրականական խլեստակովները ատելի են մեզ միշտ, և խլեստակովութիւնը յանձնումենք ուրիշ գրողներին: Կատարեալ անկեղծութեամբ առաջարկումենք մեր պատուելի ընթերցողներին, որ նոքա գրեն ոչ միայն մեր ծանօթի կամ բարեկամի ընդդէմ, այլ ամեն անկեղծութեամբ կրիտիկեն մեր գործունէութիւնը, մեր պակասութիւնների մասին ասեն ամենադառն ճշմարտութիւն, և մենք քաղելով դորանից օգուտ, հրատարակենք օրագրիս մէջ:

Վերջացնումենք խօսքս (ներեցէք երկարութեան) յիշեցնելով լատինական իմաստուն առածը ,, Amicus Plato, sed magis amica veritas “ Պլատոնը բարեկամն է, բայց առաւել բարեկամն է ճշմարտութիւնը: Օրագրիս տետրակները ուղարկվեցան Ձեզ ամբողջապէս:

—Մոսկվա, Դուքս Մանդ: Ձեր աշխատութիւնը ստացանք, բայց չենք կարող տպել: Բոլորովին համաձայն ենք, Մեծապատիւ Դուքս, Ձեր գեղեցիկ խօսքերին, թէ հարկաւոր է ձայն տալ երբեմն չեզոք մարդիկների դէմ, որոնց կեանքը չոր ու ցամաք անապատ է, բայց լեզուն ու բերանը մեծամեծ

պարկեր'', բայց մենք արժան չենք համարում առաջ բերել այնպիսի մարդիկներին, որոնք. . . . . . .

—Աստրախան, Ուր. Գ. Վ.: Ձեր գեղեցիկ բանաստեղծութիւնը ,,Մահ'' անունով կտպենք առանձին 200 օրինակ: Ձեր աշխատութիւնը ,,Անհաստատ աշխարհ'' անունով, որի մասին յայտնումէք նամակումդ, մենք չենք ստացել:

—Մոսկվա, Ն. Ս: Սեպ. 6-ից ուղարկված Ձեր նամակը և աշխատութիւնները ստացանք: Շնորհակալ ենք Ձեր ցանկութիւնների համար: Մենք ոչինչ ուշադրութիւն դարձնելու չենք ոչինչ զրպարտութեան և հայհոյանքին: Մենք գիտենք մեր գործը: Մենք բաղդաւոր պիտի համարենք մեզ ի հարկէ երբ կարողանումենք գոնէ մասամբ բաւականացնել Ձեր և բոլոր իմաստուն Հայերի ճաշակին: Դուք գիտէք, Ձեր առակների արժանաւորութիւնը մենք միշտ սիրել ենք և ահա առաջարկումենք այս անգամ Ձեր իմաստալի առակը մեր ընթերցողներին, որոնք բարձր բարոյականութիւն պէտք է գտնեն այս հետևեալ խօսքերի մէջ. ,,Մարդ, Լայլն:

—Ախալցխա, Ն. Մ: Ձեր վերջին նամակները և յօդվածները ,,Ճշմարտութիւն և Առաքինի մարդ'' անունով ստացանք: ,,Առաքինի մարդ'' յօդվածը անյարմար է մեր օրագրի համար: Բացի Խմբագրութենից անկախ պատճառներից, մենք չենք կարող և չենք ցանկանում այս կամ այն . . . . անձներով պարապեցնել մեր ընթերցողների ուշադրութիւնը: Ցաւ է ասել, որ մոլորութիւնը և սորա սուտ պաշտօնեաները հազւագիւտ գործ չեն անբաղդաբար մեր մէջ, ուրեմն թողնելով այդ բոլորը դեռ առանց ուշադրութեան, առաւել լաւ է գրել մեզ այն անձների մասին, որոնք հանդիսանումեն մեր մէջ որպէս առաքինի մարդ, սոքա են մեր մխիթարական, մեզ յոյս և զօրութիւն տվող օազիսներ մեր անապատում: . . . . Հաւատումենք, պատուելի պարոն, որ դեռ ևս երկար պիտի ցաւենք Դուք և մենք այսպիսի իրողութիւնների պատճառով, ոչ այնոր համար, որ դոքա յարձակվումեն մեր անձի դէմ, ոչ, (այսպէս վարվել նշանակումէ չհասկանալ բոլորովին հասարակութեան կեանքը ոչ մի ժամանակ), այլ նորա համար, որ այդ մեր սիրելի պարոնները դեռ ևս երկար պիտի մնան իւրեանց մոլորութեան մէջ, մինչև կուրօրէն պիտի ծառայեն իւրեանց կրքերին: Բայց ,,Faisons notre devoir, le reste est vanité''— կատարենք մեր պարտականութիւնը, մնացածը ունայնութիւն է:

—Դշլար, Յ. Պ.: Ձեր վերջին նամակը բանաստեղծութեան հետ ստացանք: Մենք Ձեր գեղեցիկ և բոլորովին արժանաւոր նամակը առանձին տպեցինք 100 հատ, թէև չունէինք Ձեզանից ոչինչ տնօրինութիւն այս մասին; մեզ ստիպեց այսպէս վարվելու նամակի արժանաւորութիւնը: Երբ կուղղէք նամակիդ միւս կէսը, կկազմվի մի տետրակ, որի մասին հարկաւոր է Ձեզ մի տնօրինութիւն անել: Այսպէս կարողէինք վարվել ամենեցուն հետ, որոնք կկամենան, որ նոցա յօդվածը բացի մեր օրագրի մէջ տպելուց, առանձին ևս տպենք հեղինակի համար ձրիաբար, կազմարարի ծախսը թողնելով ի հարկէ հեղինակի վերա: Սորա հետ հարկաւոր ենք համարում ասել և այս, որ Ձեր նկարագրութիւնը այնքան կատարեալ է և ճիշդ Ռուսաստանի Հայերի այժմեան դրութեան, որ դա կարող է վերաբերվել ամենեցուն: Դշլարքաղաքի փոխանակ դրեցէք Թիֆլիս, և յօդվածը և նորա դատողութիւնների ճշդութիւնը կորցնելու չէ բոլորովին ոչինչ ամեն կողմից, թէ արհեստների և թէ արվեստագիտութեան կողմից: Մենք բոլորովին համաձայն ենք և բողոքում ենք Ձեզ հետ միասին Հայերի բռնած ուղղութեան դէմ, որոնք հեռացնում են իւրեանցից ամեն արվեստագիտութիւնը: Հայերին հարկաւոր են անշուշտ և արվեստներ և սրվեստագիտութիւնը, և մեր օրագիրը արդէն ասել է և ահա կրկնում ենք, որ փրկութիւնը Հայերը արվեստներից պիտի սպասեն: Խոստովանում ենք—առաւել ճիշդ նկարագիր մեզ չէ պատահել հայկական նոր գրականութեան մէջ կարդալ:

—Մոսկվա, Յ. Մ.: Խնդրում ենք Ձեզանից մեր օրագրի համար նամակագրող գտնել այդտեղից արդէն յայտնի պայմանով: Մենք նամակագրողներից չենք կարող պահանջել պ. Բուչուբէգեանի նամակի նման գրութիւն, որովհետև դորա համար հարկաւոր էին աւելի աշխատութիւն և ժամանակ: Բայց մենք կբաւականայինք այնպիսի նամակներով, ինչպիսի մենք ստացանք Ալեքսանդրոպօլից (№ 8): Մանաւանդ նշանաւոր պիտի լինի Մոսկվաի և Պետերբուրգի նամակագրութիւնը: Այդ քաղաքներում, որպէս մայրաքաղաքներում—կայ Եւրոպական հասարակութիւն, կայ միտք, կայ զգացումն—մի խօսքով կայ մարդութիւն: Այդ մարդութեան գործունէութիւնը, պայմանները պարզ յայտնել կարելութեան չափ հայկական ընթերցողներին — արդէն մեծ և արժանաւոր ծառայութիւն պիտի համարվի մեր հասարակութեան համար:

—Եկատերինոդար, Համբ. Իփեկ: Ձեր պարտաւորող տելեգրամը ստացանք, որով հարցնումէիք մեզ. շարունակվումէ արդեօք Կռունկ օրագիրը և սկսելէնք արդեօք „Հայկական Աշխարհ" օրագիրը? Ձեր գեղեցիկ, այս վեհանձնաբար արտայայտուած հարցասիրութեանը շտապեցինք պատասխան տալ: Այժմ ահա նորէն յայտնումենք, որ „Հայկական Աշխարհ" օրագրի տպագրութիւնը արդէն սկսուել է և շուտ կհրատարակուի նորա առաջին մարտ ամսի տետրակը:

—Նուխի Գր. Եղ: Ձեր յօդուածը կտպուի:

Ախալցխա, Յ. Գ–եղ: Ընդունումենք Ձեր Թարգմանութիւնը, միայն թէ պարզ գրվի այսուհետև: Համարձակվումենք նկատել, որ եթէ „ասոնք անոնք" և սոցա նման ուրիշ բառերի տեղ ընդհանուր գործածական „սոքա, նոքա" և ուրիշ բառեր դնէիք—Ձեր Թարգմանութիւնը աւելի ընդհանուր նշանակութիւն կարող էր ունենալ:

Մոսկվա, Վ. Տր. Եղ: Այս տողերիս ստացանք Ձեր նամակը: Շնորհակալութեամբ ընդունելով Մոսկվայի ուսանողների աշխատակցութիւնը, պատրաստ ենք ուղարկել յարգելի ժողովին „Հայկական Աշխարհ" օրագրի մի օրինակը ձրիաբար:

Հայկական Կաթողիկոսի ընտրութեան մասին:

Տետրակիս մէջ առաջարկելով ընթերցողներիս Նորին Կայսերական Բարձրութեան կամքով ~~սահմանուած կանոնները~~ Կաթողիկոսի ընտրութեան համար պատգամաւորներ ընտրելու, յոյս ունինք, որ թէ պատգամաւորների ընտրութիւնը և թէ նոցա ձայն տալը Կաթողիկոսի համար կլինի սուրբ սրտով և անաչառ մտքով: Հաւատումենք, որ այս գործը ամեն Հայի համար սուրբ և մեծ գործ է: Համարձակվումենք նկատել, որ Կաթողիկոս պիտի ընտրվի այն անձն, որ արդէն հանդիսացել է ազգի առաջ իւր գեղեցիկ գործերով ազգաշինութեան կողմից: Դէպի այս խնդիրը մենք կվերադառնանք:

---

19. *Հայկական Գրականութիւն*, *եր.* 451. Փ. ԳԻԻԿՐՕ։
20. *Օտարերկրեա մատենագրութիւն*, *եր.* 457. *Մատենասէր*։
21. *Ռուսական մատենագրութիւն*, *եր.* 461. ՄԱՏԵՆԱՍ։
22. *Կրթութիւն և լուսաւորութիւն տարածող հիմնարկութիւնների մասին Թիֆլիսում*, *եր.* 462. . Ի. Բ։
23. *Մանրալուրեր*, *եր.* 466. . . . .
24. *Աֆօրիզմներ*, *եր.* 473. . . . .
25. *Հայկական Կաթողիկոսի ընտրութեան մասին*, *եր.* 473.
26. *Ծանուցմունք հրատարակողի կողմից*, *եր.* 476. . .
27. *Մեր ներքին գործեր*, *եր.* 478. ԹԻՖԼԻՍՑԻ ՀԱՅ։
28. *Պատասխաններ Խմբագրութեան կողմից*. *եր.* 489 .

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ։

„ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ" *Օրագրիս* 1866 *թուի տարեկան գինը* (10 *տետրակ մարտից սկսած*) *Թիֆլիսում և Անդրկովկասեան քաղաքներում* 4 *մանէթ է, իսկ Ռուսաստանում* 5 *մանէթ ճանապարհի ծախսով*։

Թիֆլիսում „ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ" *Օրագրին կարելի է ստորագրվել միայն գրավաճառ պ. Աւետիք Էնֆիաճեանի մագազինում*։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն դառնալ ուղղակի դէպի Խմբագրող—Հրատարակողը այս հասցէով. Степану Степане. Въ Тифлисъ. Въ Редакцію армянскаго журнала „Армянскій Міръ".

„ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ" *Օրագրի մարտ ամսի առաջին № արդէն տպվումէ*։

ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ՍՏԵՓԱՆՈՍ ՍՏԵՓԱՆԷ։

Дозволено цензурою. 1866. *Տպարան Մելքովի և ընկ*։